Azg Ազգ

17 ՕԳՈՍՏՈՍ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 142(4760)

ISSN: 1829-1651

«Թումո» եւ Սերժ Թանգյան

ՄԱԲԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անցած կիրակի երկու արժանահիշատակ իրադարձություններ տեղի ունեցան Հայաստանում: Այնքան արժանահիշատակ, որ թեկուզ երկու օր անցել է այդ իրադարձություններից, սակայն արձակուրդից վերադարձած «**Ազգը**» չի կարող շրջանցել դրանց նշանակությունը: Այսպես՝ Երեւանում, Հալաբյան 16 հասցեում, սփյուռքահայ բարեարներ Սեմ եւ Սիլվա Սիմոնյանները հիմնադրեցին ստեղծարար տեխնոլոգիաների «Թումո» կենտրոնը, որի կայացումը վառ օրինակ է Հայաստանի գործարար-բարեարների համար այն առումով, թե ինչպե՞ս պետք է Հայաստանի ու հայերի համար հեռանկարային բարեգործություն անել, որ այն Հայաստանի ապագային առնչվի եւ ոչ թե կերվի-վերջանա տեղում՝ պահի շահին սպասարկու եւ առանց հեռագնա նպատակի: Եվ նույն Սիմոնյանների նախաձեռնությամբ Երեւանում եւ «Թումոյի» տարածքի բացօթյա հրապարակում տեղի ունեցավ աշխարհահռչակ System of a Down ռոք-խմբի մենեղգիչ Սերժ Թանգյանի համերգը, որին ներկա էին տասնյակ հազարավոր երեւանցիներ:

Նախ պատմենք «Թումո» նախաձեռնության եւ նրա հիմնադիրների մասին, որոնց վերաբերյալ հեռուստատեսային լրատվությունից զուտ տեղեկություններ ստանալը շատ դժվար էր: «Թումոն» հիմնադրած ամերիկահայ գործարար Սեմ Սիմոնյանի մանկությունն անցել է Բեյրութում, Բեյրութի ամերիկյան համալսարանն ավարտելուց հետո տեղափոխվել է ԱՄՆ՝ Դալլաս: Արլինգթոնում հիմնել է հեռահաղորդակցության եւ համակարգչային տեխնիկայի կատարելագործմամբ զբաղվող ԻՆԵԹ ձեռնարկությունը: Այնուհետեւ ընդլայնել է բիզնեսը, ստեղծել է համակարգչային կատարելագործված «Տուրբո 6» եւ «Սփայզեր» ծրագրերը, բազմաթիվ հայանպաստ գործեր իրականացրել:

«Հուսով ենք, որ այստեղ, Թումանյանի այգում, մեղրի խոհեմ մի կաթիլը կարող է զինել այսօրվա պատանիներին տեխնիկական եւ ստեղծարար հմտություններով՝ վաղվա Հայաստանը կերտելու համար: Մի կաթիլ «Թումոն» կդառնա մի օրակ՝ դրական փոփոխություններ ի շրթայում»: Այսպիսի իղձ էր ձեւակերպված «Թումո» կենտրոնի բացմանը ներկա հյուրերին բաժանված մի կաթիլ «Թումոյի» (մեղրի) փայտե շրջանակի վրա. մեղրը, հայտնի է, կաթիլ-կաթիլ է դառնում շրջանակ:

Տես էջ 2

Ալիեւը «մոռացե՞լ է» մադրիդյան սկզբունքները

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Օգոստոսի 9-ին Բաքվի Հեյդար Ալիեւի անվան օդանավակայանն ընդունեց եւ ճանապարհեց Ադրբեջանի երկու նախագահներին: Վաղ առավոտյան Բաքվից Սոչի մեկնեց նախագահ Ալիեւը, իսկ արդեն օրվա ընթացքում Բաքվում վայրէջք կատարեց Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովը: Հիշեցնենք՝ վերջինիս նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում. հայրենիքում Մութալիբովի նկատմամբ հարուցված է քրեական գործ՝ «պետական հեղաշրջում կազմակերպելու փորձի» մեղադրանքով: Ադրբեջանի առաջին նախագահը մեղադրվում է նաեւ, որ 1990-ին լինելով նախարարների խորհրդի ղեկավար, «չի արգելել սովետական զորքի մուտքը Բաքու»: Ինչեւէ՝ նախագահ Ալիեւը, փաստորեն, գնացել է ընդառաջ նախագահ Մութալիբովին, որը որդու հուղարկավորությանը մասնակցելու համար օգոստոսի 9-ին ցանկություն էր հայտնել անարգել մուտք գործել Բաքու:

Ամենայն հավանականությամբ ՌԴ նախագահը նույնպես ակնկալում էր Ալիեւի «ընդառաջ քայլերին»՝ Սոչիում նրան հանդիպելով եւ քննարկելով ղարաբաղյան, Կասպից ծովի իրավական կարգավիճակի, երկկողմ գործակցության վերաբերյալ հարցեր: Սակայն Մեդվեդեւի հույսերը՝ իր ադրբեջանցի գործընկերոջից փոխըմբռնում ակնկալելու, դժվար է անվանել արդարացված: Բայց նախ անդրադառնանք փաստին, թե ի՞նչ կարող է նշանակել Սոչիում ռուս-ադրբեջանական ամենաբարձր մակարդակի հանդիպումը:

Սա հունիսի 24-ին Կազանում կայացած Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումից հետո առաջին առիթն էր, երբ Ռուսաստանի նախագահը հանդիպեց ԼՂ հակամարտության կողմերից մեկի նախագահի հետ՝ խոսելու առավելապես ԼՂ հիմնահարցի շուրջը: Իսկ որ այդ նախագահը հենց Ադրբեջանինն է, նշանակում է, որ Մոսկվան ավելի շատ աշխատանքներ է տեսնում եւ տանում հենց Բաքվի փոխըմբռնումը սատանալու հարցում: Ինչն իր հերթին եւս մեկ անգամ ապացուցում է, թե ո՞ւմ պատճառով համաձայնություն չգրանցվեց Կազանում: Բացի սրանից՝ հաջորդ տարվա մարտի 5-ին կկայանան Ռուսաստանում նախագահական ընտրություններ, որոնց մասնակցելու իր ցանկությունը չի թաքցնում Մեդվեդեւը: Իսկ Ռուսաստանի նման գերտերության համար ԼՂ հիմնահարցի պես կարեւոր հակամարտության կողմերին գոնե որոշակի համաձայնության բերելը նույնպես կարեւոր է, մանավանդ որ նախագահ Մեդվեդեւը անձնական մեծ ներդրում ունի այս հիմնահարցի կարգավորման գործընթացում: ԼՂ հիմնահարցում որոշակի, բայց զգալի տեղաշարժի հասնելը Մեդվեդեւի կարեւոր ձեռքբերումներից կլինի: Հետեւաբար Մեդվեդեւը, ամենայն հավանականությամբ՝ մինչեւ տարեվերջ կամ հաջորդ տարվա սկիզբ, փորձում է նախապատրաստել նոր եռակողմ հանդիպում, որի համար, սակայն, նրան պետք են հսկայական երաշխիքներ, որ կողմերը հաստատապես համաձայնության են գալու՝ առաջարկված սկզբունքների հիման վրա խաղաղության մեծ պայմանագրի վրա աշխատելու: Իսկ թե ինչու է Մեդվեդեւը նման երաշխիքներ փնտրում հատկապես Ալիեւից, թողնենք մտորելու ադրբեջանցի քաղաքագետ-վերլուծաբաններին:

Սոչիի Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումը ղարաբաղյան կտրվածքով հետաքրքրական էր նախագահների հայտարարության տեքստերի տեսանկյունից, քանի որ, հասկանալի է, Մեդվեդեւն ու Ալիեւը որեւէ փաստաթուղթ չեն ստորագրել եւ համատեղ հայտարարությամբ հանդես չեն եկել: ՌԴ նախագահը նշում է. «Իհարկե մեր զրույցի կարեւոր թեմաներից էր ԼՂ հիմնահարցի կարգավորումը: Ես ցանկանում էի անկեղծ զրույց ունենալ՝ ի՞նչ անել հետագայում, ինչպե՞ս կզարգանան իրադարձությունները, մասնավորապես ժամանակ առաջ Կազանում կայացած մեր եռակողմ հանդիպումից եւ դրանից առաջ՝ նույն ձեւաչափով մեր հանդիպումներից հետո»:

Տես էջ 2

Անկանխատեսելի իրավիճակների պետք չէ սպասել

Ռուսաստան-Հայաստան գազատարի Վրաստանի հատվածի սեփականատեր ընկերության բաժնետոմսերի մի մասի վաճառքից

Ռուսաստանից Հայաստան մտնող գազատարի Վրաստանում գտնվող հատվածի 25 տոկոսը վաճառելու այդ երկրի կառավարության մտադրությունը անմիջապես մտահոգություններ է առաջացնում Հայաստանում: Դա հասկանալի է, քանի որ այդ գազատարով ենք գազ ստանում Ռուսաստանից, եւ դրա ձեռքբերման ցանկության մասին հրապարակավ հայտարարել են նաեւ ադրբեջանական ընկերությունները: Սակայն այդ հեռանկարն ամենեւին էլ ողբերգական չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից:

Նախ՝ Ռուսաստան-Հայաստան գազատարով գազի տարանցման համար Վրաստանը ստանում է համապատասխան վճարը՝ տեղափոխվող գազի 10 տոկոսի տեսքով: Դա ամրագրված է միջպետական համաձայնագրով, եւ այնպես չի կարող լինել, որ ադրբեջանական ընկերությունը ձեռք կբերի գազատարը եւ կդադարեցնի ռուսական գազի մուտքը Հայաստան:

Երկրորդ՝ ինչպես վերջերս հայտնեցին Վրաստանի պաշտոնական ներկայացուցիչները, վաճառքի է հանվում Վրաստանի Նավթի եւ գազի միջազգային կորպորացիայի, որին պատկանում է նաեւ Ռուսաստան-Հայաստան գազատարը, այլ ոչ թե գազատարի բաժնետոմսերի 25 տոկոսը:

Երրորդ եւ ամենակարեւոր հանգամանքը 25 տոկոսն է: Այսինքն՝ վաճառվում է ոչ թե կորպորացիան ընդհանրապես, այլ նրա բաժնետոմսերի 25 տոկոսը միայն: Հետեւաբար, մնացած 75 տոկոսը մնում է Վրաստանի պետության սեփականությունը, իսկ 25 տոկոսի վաճառքը ներդրումներ ներգրավելու համար է արվում:

Չորրորդ՝ Նավթի եւ գազի կորպորացիայի բաժնետոմսերը վաճառքի են հանվելու միջազգային (Նյու Յորքի, Լոնդոնի եւ Վարշավայի) բորսաներում: Դա նշանակում է, որ այդ բաժնետոմսերը կարող են ձեռք բերել բազմաթիվ ներդնողներ, այլ ոչ թե մեկ ընկերություն, ինչպես ուղղակի վաճառքի դեպքում:

Մեկ այլ հարց էլ կարող է առաջանալ: Իսկ եթե Վրաստանի կառավարությունը ապագայում վաճառի բաժնետոմսերի մնացած մասը ե՞ւս: Այդ դեպքում նույնպես հարկ չկա անկանխատեսելի իրավիճակների սպասելու: Բացի նրանից, որ դա քիչ հավանական է, քանի որ այդ կորպորացիայի մեջ են ընդգրկված Վրաստանի էներգետիկ ռազմավարական ճյուղերը, անգամ այն վաճառելու դեպքում, գնորդը պարտավոր է լինելու հարգել միջպետական համաձայնագրի պահանջները: Եթե ռուս-վրացական ներկայիս լարված հարաբերությունների առկայությամբ Վրաստանի պետական սեփականություն համարվող գազատարը գործում է, եւ Հայաստանը գազ է ստանում, ապա ինչպե՞ս կարող է մասնավոր ընկերությունը խոչընդոտներ ստեղծել այդ հարցում: Այնպես որ, գազատարի կամ, ավելի ճիշտ, դրա սեփականատեր ընկերության բաժնետոմսերի վաճառքի վերաբերյալ տեղեկատվությանը հատուկ ուշադրության արժանացնելու անհրաժեշտություն մեզ մոտ չկա:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դատախազն ինքնասպան է եղել

Երեկ լրատվություն տարածվեց, որ ժամը 13:40-ին Վանաձորի քաղաքային գերեզմանատանը, մոր շիրիմի մոտ հայտնաբերվել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, 37-ամյա Արամ Գրիգորյանի դիակը՝ ֆունֆի շրջանում հրազենային վնասվածքով: Ըստ գլխավոր դատախազության կայքէջի՝ նախնական տվյալներով, Ա. Գրիգորյանն ինքնասպանություն է կատարել իրեն ամրակցված «Մակարով» տեսակի հաշվեցուցակային ատրճանակի գործադրմամբ, որը, ինչպես նաեւ մեկ պարկուճ, դեպքի վայրում հայտնաբերվել եւ առգրավվել է: Գերեզմանատան մոտ հայտնաբերված Գրիգորյանի անձնական օգտագործման մեքենայում եղել է գրություն. «Իմ որոշումը վերջնական է, խնդրում եմ ինձ ներել եւ ոչ մեկին չմեղադրել: Իմ մահվան մեջ ոչ ոք մեղավոր չէ»:

Հարուցվել է քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի (ինքնասպանության հասցնելու) հատկանիշներով, նախաքննությունը վարում է հատուկ քննչական ծառայությունը:

Ծնունդով լոռեցի Արամ Գրիգորյանը հունիսին էր նշանակվել Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ, դրանից առաջ Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազ էր, երեք անչափահաս երեխաների հայր: Թե ի՞նչն է եղել ինքնասպանության պատճառը՝ դեռեւս առաջ քաշվող վարկածները չեն շրջանառվում: Արդյոք աշխատանքային գործունեությա՞ն, թե՞ անձնական կյանքի հետ կկապվեն դրանք, արդյոք նամակի գոյությունը բացառո՞ւմ է սպանության վարկածը, թե՞ իրոք ինքնասպանություն է, առաջիկայի խնդիր է:

Մ. Խ.

Էս մի ռաունդը կուս գնաց, բերեք մեկելը

Օգոստոսի 9-ին Կարապի լճի մոտ՝ ոստիկանության եւ ՀԱԿ-ի ակտիվիստների միջեւ տեղի ունեցած միջադեպին հաջորդած իրադարձություններից հետո ՀԱԿ-ի մամուլի խոսնակ Արման Մուսինյանը հայտարարել էր, թե ձերբակալված ակտիվիստների կարգավիճակից է կախված ՀԱԿ-իշխանություն երկխոսության շարունակության հարցը: Սակայն երեկ Հայաստանի ոստիկանությունը մեղադրանք առաջադրեց ՀԱԿ-ի եւս երեք ակտիվիստի, որոնք ավելի վաղ (օգոստոսի 12-ին) ազատ էին արձակվել ժամանակավոր պահման մեկուսարանից. ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության բաժինը մեղադրանք առաջադրեց Արեգ Գեւորգյանին, Սահակ Մուրադյանին եւ Դավիթ Քիրամիջյանին 258 հոդվածի 3-րդ մասի առաջին կետի հատկանիշներով (խուլիգանություն): Ավելի վաղ Տիգրան Առաքելյանի, Արսակ Կարապետյանի եւ Սարգիս Գեւորգյանի նկատմամբ երկամսյա կալանք-խափանման միջոցի կիրառման որոշում Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը ընդունել էր օգոստոսի 12-ին: «**Ազգի**» ընթերցողներին հիշեցնենք, որ օգոստոսի 9-ին ՀԱԿ-ի 7 ակտիվիստ բերման է ենթարկվել, երբ, իրենց խոսքերով, փորձել են միջամտել պետական պահպանության ծառայության կողմից անցորդների խուզարկությանը՝ հիմնավորում պահանջելով այդպիսի գործողությունների համար, որից հետո էլ բռնությունների ենթարկվել ոստիկանների կողմից: Ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը մամուլի ասուլիսում հերքել էր բռնության փաստերը՝ դրանք վերահասցեագրելով ՀԱԿ-ի ակտիվիստներին: Այսպես թե այնպես՝ շատ հարկավոր միջադեպ է դուրս գալիս օգոստոսի 9-ին տեղի ունեցածը՝ ՀԱԿ-իշխանություն փոխադարձ շանտաժի առումով, իսկ թե ո՞վ է ճիշտ, ով ոչ՝ այս հարցի պատասխանը մենք չէ, որ պիտի տանք:

Տես էջ 3

ԱԶԳ

Մեկնաբանություն

Երկու դեսպան, երկուսն էլ՝ մի տնից

Արտառոցությունը, ասում են, երբեմն հարիր է մառախլապատ Ալբիոնի բնակիչներին, որոնք շատ հարցերում են տարբերվում կամ առնվազն ձգտում տարբերվել մայրցամաքի ներկայացուցիչներից, ինչպես արտաքին իրողությունները կղզեբնակի մոտեցմամբ չափելու, այնպես էլ մայրցամաքը որպես առավել փոքր հողակտոր դիտարկելու առումով:

Երեւանում բրիտանական դեսպանատնից տեղեկացնում են, որ Հայաստանում Միացյալ Թագավորության նոր դեսպաններ են նշանակվել: Դիվանագիտական թեմաներով անեկդոտների կամ զվարճախոսությունների շարքից չէ վերը նշվածը, որ Մեծ Բրիտանիան Հայաստանում դեսպաններ, այլ ոչ թե դեսպան է նշանակել: Ջոնաթան Ջեյմս Էյվսը եւ նրա տիկին Քեթրին Ջեյն Լիչը Հայաստանում համատեղ դեսպաններ են նշանակվել 2012 թ. հունվարին պաշտոնը սանձնելու եւ 4-ամսյա հերթագայությամբ դեսպան լինելու պայմանով:

Այն, որ նշանակված դեսպանների պարագան որեւէ որոնմամբ այլ օրինակ ունենալու արդյունք չտվեց, առանձնակի անսպասելի չէր: Բայց երկու դեսպան մեկ պետությունում, այն էլ հերթագայությամբ, բնավ էլ դիվանագիտական տրամաբանության ու պրակտիկայի դրսեւորում չէ, այլ ուղղակի արտառոցություն, որը չի կարող բացատրելի ներկայացվել ողջամիտ դատողներին:

Օրինակ, հետաքրքրական է պատկերացնել երկու դեսպանների տարբերակով դեսպանատան հետ աշխատելու պարագան, երբ մեկի հետ ձեռք բերված պայմանավորվածության ժամկետները հայտնվեն մյուսի հերթագայության ժամանակահատվածում կամ ոչ այնքան բաց թեմաների քննարկումը անհրաժեշտ լինի շարունակել այն ժամանակ, երբ ամուսնուն փոխարինի կինը կամ հակառակը: Իսկ եթե այր ու տիկին հանդես պիտի գան մեկ անունից, ինչն էլ հենց տրամաբանական է, էլ ինչ կարիք կար նման անսովոր քայլով առաջնորդվելու, հատկապես, եթե հայաստանյան պրակտիկան էլ նման փորձ չունի:

Մյուս կողմից, հենց իրենց՝ դեսպանների կենսագրությանը ծանոթությունը համատեղ աշխատանքի մի քանի օրինակ է ի ցույց դնում ինչպես բրիտանական դեսպանատանը Ճապոնիայում, այնպես էլ Ռուսաստանում, բայց երկու պարագայում էլ դրանք չունեն ներկայացվածության այդքան բարձր աստիճան, որքանի փորձ արվում է Հայաստանում:

Առավել անգլիական կորակեի այն, ինչ դեսպանների անունից տարածվել է պաշտոնական հաղորդագրության մեջ: Մասնավորապես, ինչպես նշված է դեսպանատան հաղորդագրության մեջ, «համատեղ դեսպաններն իրենց նշանակման մասին ասել են. «Ուրախ ենք, որ նշանակվել ենք Հայաստանում համատեղ դեսպաններ...»: Տպավորիչ է, որ ոչ միայն նշանակողն է խոսում հոգնակիով, այլեւ նշանակվածները:

Ի դեպ, սեպտեմբերի վերջին իր պաշտոնական պարտականությունների կատարմանը կանցնի նաեւ Բաքվում Մեծ Բրիտանիայի նորանշանակ դեսպանը, եւ նկատենք, որ Ադրբեջանի պարագայում Միացյալ Թագավորությունը բավարարվել է մեկ դեսպանով՝ Լյուքսեմբուրգում նախկին դեսպան Փիթեր Բեյթմանին տեղափոխելով Բաքու: Իսկ Հայաստանի պարագայում թեեւ նորանշանակ դեսպանները բավականին ծանոթ են հարավկովկասյան հարցերին վերլուծաբանական մակարդակով, այդուհանդերձ, դժվար թե նրանց նշանակողն առաջնորդվել է հայկական «շատ լինի, քիչ չլինի» տարբերակով: **Ա. Հ.**

Երբ մանր ժուլիկները կուսակցություն են ղեկավարում

Կամ ինչու «Աղվերան»-ը դարձավ «Golden Palace»

Այն, ինչ այս օրերին տեղի է ունենում ՀՌԱԿ-ի մեջ եւ շուրջը, կարելի է զավեշտական համարել, եթե այդ կուսակցությունը չկրեր Ռամկավար անունը, այս դեպքում հասկանում ես, որ ավանդական կուսակցության գլուխ անցած ավանտյուրիստները իրենց հերթական ժուլիկություններն են կատարում՝ վարկաբեկելով ոչ միայն իրենց, այլեւ մի ամբողջ կուսակցության: Կատարվածին եւ դրա պատճառներին **«Ազգը»** հետագայում ավելի մանրամասն կանդրադառնա: Այս պահին միայն հայտնի է, որ տեղի ունեցած «հեղաշրջման» փորձը իրականացվել է մանր սախոսների դասական եղանակով: Նախ տարածվել է հաղորդագրություն, որ «օգոստոսի 14-ին տեղի կունենա ՀՌԱԿ 19-րդ արտահերթ Պատգամավորական ժողովի 2-րդ նիստ «Աղվերան» հյուրանոցի մեծ սրահում ժամը 14:00-ին», եւ մասնակիցները պետք է հավաքվեն Երեւանի Շահումյան հրապարակում ավտոբուսներով մեկնելու համար, սակայն այնտեղ հավաքվածները, այդ թվում նաեւ լրագրողներ, ոչ ավտուբուս են տեսել եւ ոչ էլ հաղորդագրություն ստացել, թե ինչ է կատարվում: Ինչպես հետագայում հայտնի է դարձել, ժողովը իբր կայացել է Երեւանի «Golden Palace» հյուրանոցում, հավանաբար ավելի նեղ, ընկերական շրջապատում: Ի դեպ, մեր փորձը՝ «Golden Palace» հյուրանոցի ղեկավարությունից պարզել եղելությունը, ավարտվեց անհաջողությամբ, հյուրանոցի ադմինիստրացիան հրաժարվեց այդ հարցին պատասխանել, այնպես որ կարելի է նաեւ կասկածի տակ դնել, թե արդյոք այդ հյուրանոցում ընդհանրապես ինչ-որ բան տեղի՞ է ունեցել: Ինչեւէ, Անտինյանի ճակատագիրը չէ, որ մեզ տվյալ դեպքում հուզում է, այլ այն փաստը, որ ավանդական կուսակցության անունը ամեն օր վարկաբեկվում է մարդկանց կողմից, որոնց մտավոր ու բարոյական չափանիշները հայտնի են բոլորին: Պարզ է, որ ՀՌԱԿ նախկինների վերադարձը չէր կայանա առանց՝ այսպես կոչված ՌԱԿ կենտ. վարչության ատենապետ Մայք Խարադյանի համաձայնության, որն իր ժամանակին նման «դասական» եղանակով կեղծ համագումար իրականացրեց Հորդանանի մայրաքաղաք Ամմանում, իսկ այժմ իր աշակերտները՝ «Golden Palace»-ում: Կարող ենք ավելացնել, որ կատարվածը կուսակցությունների մասին օրենքի տեսանկյունից հակաօրինական է, որը դեռ պետք է իր գնահատականին արժանանա:

Հ. Հ.

Ալիեւը «մոռացե՞լ է» մադրիդյան սկզբունքները

1-ին էջից

Այս հայտարարությունն արդեն վկայում է, որ մասնավորապես Կազանի եռակողմ հանդիպումից հետո «ի՞նչ անելը» առավելապես կախված է Բաքվից, ու, հատկանշական է, ոչ այնքան նրա կամքից, այլ նրա հետ ավելի պարբերաբար աշխատելուց եւ ավելի «անկեղծ զրուցելուց»: Մեդվեդեւի խոսքին ի պատասխան, Ալիեւը նշել է. «Այն սկզբունքները, որոնց հիման վրա տեսանելի է հակամարտության լուծումը, համապատասխանում են միջազգային իրավունքի նորմերին»: Նկատենք՝ Իլհամ Ալիեւը չի խոսում ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած մադրիդյան սկզբունքների մասին (Ադրբեջանի ղեկավարը Սոչիում առհասարակ չի խոսում մադրիդյան սկզբունքների մասին-Հ. Ա.) կամ այլ սկզբունքների, բայց էլի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած, այլ խոսում է այն սկզբունքների մասին, «որոնց հիման վրա տեսանելի է հակամարտության լուծումը»: Առաջանում է հարց՝ ո՞ւմ է տեսանելի. Երեւանի՞ն, Ստեփանակերտի՞ն, Բաքվի՞ն, թե՞ ԵԱՀԿ Մինսկի խմբին: Միանգամից բացառենք վերջինը, քանի որ այդ պարագայում Ալիեւը անպայման կշեշտեր Մինսկի խմբի անունը, իսկ, հաշվի առնելով, որ Ադրբեջանի նախագահը չի կարող խոսել սկզբունքների մասին, որոնք տեսանելի են Երեւանին ու մանավանդ Ստեփանակերտին, հասկանալի է, որ Ալիեւը խոսում է միայն իրեն տեսանելի սկզբունքների մասին, թերեւս այն սկզբունքների կամ առաջարկությունների, որոնք ադրբեջանական կողմը ներկայացրեց Կազանում, կամ որոնցով պատասխանեց՝ նախագահ Մեդվեդեւի ուղերձին, որը Մեդվեդեւը կողմերին էր ուղարկել արտգործնախարար Լավրովի միջոցով: Սակայն հակամարտության լուծումը կամ դրա կարգավորման գործընթացում բեկումը հնարավոր կլինի միայն հակամարտության բոլոր կողմերին «տեսանելի» սկզբունքների պարագայում, այլ կերպ ասած՝ փոխզիջումների, որոնց մասին բազմիցս խոսել է միջազգային միջնորդ խումբը, եւ որի առնչությամբ իր պատասխանությունը բազմիցս հայտնել է Երեւանը: Այնինչ Բաքուն, փաստորեն, դեռեւս պատրաստ չէ հիմնահարցը «բոլորի համար տեսանելի» սկզբունքով լուծելուն կամ պարզապես չի ուզում: Հետեւաբար՝ Սոչիում կայացած Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումը ղարաբաղյան մասով, ոչ մի լուրջ, էական արդյունք չի տվել, եթե, իհարկե, չի ավելացրել ՌԴ նախագահի հիասթափությունը: Կոնկրետ նախագահ Մեդվեդեւը այս ամենն, իհարկե, արձանագրելու է: Հետաքրքրական զուգադիպությամբ՝ սեպտեմբերի 2-3-ը Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում կայանալիք ԱՊՀ երկրների ղեկավարների հոբելյանական գագաթաժողովին մասնակցելու են կազմակերպության անդամ բոլոր երկրների, այդ թվում՝ Հայաստանի ղեկավարները: Իրենց մասնակցությունը դեռեւս չեն հաստատել Բելառուսի նախագահ Լուկաշենկոն, թերեւս ՌԴ նախագահի հետ ունեցած ոչ փայլուն հարաբերությունների համատեքստում, Ուկրաինայի նախագահ Յանուկովիչը, որի երկիրը նույնպես հիմնականում տնտեսական բնույթի խնդիրներ ունի Մոսկվայի հետ, եւ արդեն հայտնի է, որ Դուշանբե չի մեկնի Ադրբեջանի նախագահ Ալիեւը. Ադրբեջանը կներկայացնի վարչապետ Արթուր Ռասիզադեն: Ինչո՞ւ Ալիեւը չի մեկնում ԱՊՀ-ում իր գործընկերների գագաթաժողովին, այն էլ հոբելյանական, եւ առհասարակ, ինչո՞ւ է ավելի ու ավելի նկատելի դառնում, որ Իլհամ Ալիեւը խուսափում է Դմիտրի Մեդվեդեւի հետ պարբերական հանդիպումներից ու «անկեղծ զրույցներից», մանավանդ որ ԼՂ հակամարտության «կառուցողական» կողմն է ինքը, իսկ հակամարտությունում կառուցողական կողմերը որեւէ մեկից խուսափելու կարիք չեն ունենում սովորաբար: Եվ, որը պակաս կարեւոր չէ, ինչո՞ւ Իլհամ Ալիեւը Սոչիում որեւէ հիշատակում չարեց մադրիդյան սկզբունքների վերաբերյալ, գուցե մոռացե՞լ է դրանք:

Ազգային գործ

«Թումո» եւ Սերժ Թանգյան

1-ին էջից

Կենտրոնը հիմնադրվել է Կիեւյան կամրջին հարակից տարածքում, Հրազդանի կիրճի վրա է կախված, իսկ Հրազդանի կիրճի՝ մինչեւ Կիեւյան կամուրջ տարածքը բարեկարգվել, ենթակառուցվածքներով զինվել է այն աստիճան, որ այնտեղ կիրակի երեկոյան, գեղեցիկ ձեւավորված բեմում ելույթ ունեցավ հայազգի ափխարհահռչակ ռոք-երգիչը:

Ի՞նչ բան է «Թումո» կենտրոնը: Համակարգչային դրախտ, կարելի է ասել: Օգոստոսի տասնչորսը կարելի է անվանել այդ դրախտի դռների բացման օր բոլոր այն երիտասարդ եւ պատանի տարիքի մարդկանց համար, ովքեր ուզում են իրենց փնտրել նոր տեխնոլոգիաների ոլորտում, ապագան կապել հենց բարձր տեխնոլոգիական կրթվածության հետ: «Թումոյի» կայքէջում գրված է. «Հասկայական տարածք սովորելու եւ ստեղծագործելու համար: Չորս հեռանկարային ոլորտներ՝ բազմաթիվ հնարավորություններով՝ հմտությունները զարգացնելու եւ հաջողակ ապագա կերտելու համար: Բարի գալուստ մի վայր, որ յուրահատուկ է ողջ աշխարհում: Բարի գալուստ «Թումո»»: Կենտրոնը մեն-միակ նոպատակով է ստեղծվել՝ իրոք խթանել տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանում եւ հայ երիտասարդներին մատչելի եւ անվճար հնարավորություն ստեղծել մասնագիտական ուսումնական ծրագրերին ծանոթանալու:

Տիկին Սիլվա Սիմոնյանը «Ազգի» հետ զրույցում նշեց, որ գաղափարը տասը տարվա է, ավելի քան քսան միլիոն է ներդրված ծրագրում: Սեմ Սիմոնյանն ուզում է, որ սեպտեմբերից մեկնարկող այս ծրագրերը հետագայում ընդլայնվեն՝ ավելի փոքր տարիքից երեխաները գան, ավագ տարիքի մարդիկ եւս ընդգրկվեն: Կենտրոնի սպասարկման տարեկան ծախսերը եւս պետք է Սիմոնյանները հոգան: Կենտրոնը կաշխատի, ընթացքում կտեսնեն՝ ի՞նչը սրբագրեն, ի՞նչն ավելացնեն-պակասեցնեն: Տիկին Սիլվան եւ նրա ամուսին Սեմ Սիմոնյանը աչքի էին ընկնում պարզ եւ անպաճույճ պահվածքով, բարձր կրթվածությամբ՝ ոչ մի համեմատություն թիկնապահներին հետեւը գցած մեր օլիգարխների մեծ մասի հետ. ահա թե ուր պիտի եկած լինեին մեր օլիգարխները, եւ ումից օրինակելու բան ունեին՝ եւ պահվածքի, եւ բարեգործության բովանդակության առումով: Բայց մեր գործարարներից ոչ ոք ներկա չէր «Թումոյի» բացմանը՝ մի քանի նախարար, Երեւանի քաղաքապետը, Հայաստանի եւ Արցախի նախագահները: Նախագահ Սարգսյանը հատկապես գնահատեց «Թումոյի» ստեղծման նշանակությունը ռազմավարական առումով, քանի որ երիտասարդ եւ ժամանակակից տեխնոլոգիաներով կրթված երիտասարդների ներուժո՛վ երկրի մրցունակության բարձրացման խնդիր ունենք, քանի որ մեր բնական պաշարները սուղ են, դրանց պետք է խնայողաբար վերաբերվենք. եւ մանավանդ պետք է կարողանանք մտավոր ծառայություններ մատուցել ե՛ւ հասարակությանը, ե՛ւ տարածաշրջանին, ե՛ւ աշխարհին: Այդ իմաստով՝ նախագահը շատ խրախուսելի էր համարում տեր եւ տիկին Սիմոնյանների արածը, լավ օրինակ ուրիշների համար, «ովքեր մեծ ջանքերի շնորհիվ կարողացել են հաջողություններ հասնել իրենց ոլորտներում, եւ հիմա ժամանակն է, որ հաջողությունների մի փոքրիկ մասնիկ փորձեն կիսել հայրենիքի հետ»:

«Թումո» կենտրոնում տեղի ունեցավ Սերժ Սարգսյան-Սերժ Թանգյան հանդիպում, որի ընթացքում Թանգյանը, ըստ պաշտոնական լրատվության, նշել է, թե շարունակելու է ջանքերը Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ, խոստանալով, որ իր ռոք խմբի հետ կգա Հայաստան:

«Թումոյի» բացման օրը երեւանցիները կհիշեն նաեւ այն պատճառով, որ էլի Սիմոնյանների նախաձեռնությամբ եւ ծախսերով նրանց կախարդական գիշեր պարգեւեց հանրահայտ երգիչ Սերժ Թանգյանը, որի համերգին եկած բազմությունը լցրել էր կիրճի Թումանյան այգու հատվածը եւ կհասներ մի քանի տասնյակ հազարի: Թանգյանն ու հայ ժողովուրդը արժանի վերաբերմունք ցույց տվեցին իրար՝ առաջինը իր երգի անման ոգին փոխանցելով, երկրորդը՝ աննախադեպ օվացիայով: Թանգյանը երգեց 16 երգ՝ ամեն

մեկը սյուժե եւ բեմադրություն, բոլորը՝ ծանոթ ու սիրելի ողջ աշխարհում: Նվագակցում էր Հայաստանի օպերայի սիմֆոնիկ նվագախումբը, համերգի դիրիժորը Նոր Զելանդիայից ժամանած Համիշ Մաքֆերն էր: Թանգյանի երգերի կախարդական հնչյունները տարածվում էին Հրազդանի կիրճում, միախառնվում երկրպագուների բուռն օվացիաներին. գեղեցիկ լույսեր եւ բարձրացված ձեռքեր Հրազդանի կիրճում, վերեւում լիալուսինը՝ հրաշալի գիշեր էր:

*«Թումո» կենտրոնի բացման առիթով «**Ազգ**»-ին Նյու Յորքից հոդված է ուղարկել Հակոբ Վարդիվառյանը: Հոդվածից տեղեկանում ենք, որ Սեմ Սիմոնյանը սովորել է Բեյրութի Վահան Թեքեյան եւ ադա Հովակիմյան-Մանուկյան վարժարաններում: Երիտասարդ տարիքից անդամակցել է Ռամկավար Ազատական կուսակցությանը: Ներկայումս ՀԲԸՄիության կենտրոնական վարչական ժողովի անդամ է:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

Քաղաքաթեի Drive-ը հասավ կրթականերին

Անգործ քաղաքացիների թիվը գերազանցում է 3000-ը

Երբ մայրաքաղաքում սոցիալական ծանր իրավիճակ է, երբ գործազրկությունը հասել է բարձրակետի, երբ արտագաղթի չափերը արդեն սպառնում են ազգային անվտանգությանը, երկրի սոցիալական վիճակը մեղմելու փոխարեն, փակվում են աշխատատեղեր, մարդկանց սիրողում են դառնալ գործազուրկ: Մի քանի ամսվա ընթացքում քաղաքացիներին բազմաթիվ անհարմարություններ, խնդիրներ պատճառած քաղաքաթեատրանի հերթական որոշումը վերաբերում էր կրթականերին: Կարելի է ասել՝ քաղաքաթեի Drive-ը հասավ կրթականերին:

Երևանի քաղաքաթե Կարեն Կարապետյանի որոշմամբ ապամոնտաժվելու են մայրաքաղաքում գործող անօրինական, չգործող, ժամկետանց պայմանագրերով գործող եւ քաղաքաշինական չափորոշիչներին չհամապատասխանող կրթակաները: Քաղաքաթեատրանի տվյալներով՝ ապամոնտաժվող կրթակաների թիվը մի քանի հազար է: Արդեն ապամոնտաժվել են 1200 «չգործող կամ իրավական թերի հիմքերի վրա գործող» կրթականեր:

Կարեն Կարապետյանի ցանկությունը՝ տեսնել մայրաքաղաքը բարեկարգ, կանաչապատ ու գեղեցիկ, գովելի եւ ողջունելի է, սակայն այդ նպատակին հասնելու համար քաղաքի գլխավոր կառավարիչը արդյո՞ք ճիշտ ճանապարհ է ընտրել:

Քաղաքաթեի ընդունած մի շարք որոշումներից տուժում են քաղաքացիները: Նրա կացնի տակ են ընկնում հիմնականում անապահով խավի ներկայացուցիչները: Միայն վերջին որոշումից գործազուրկ է մնացել մի քանի հազար երեւանցի: Կարծես վաս ավանդույթ է դառնում, որ քաղաքաթեը երեկոյան որոշում է կայացնում, առավոտյան իրականացնում: Մինչդեռ քաղաքի համար որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է լսել նաեւ քաղաքացու կարծիքը: Մինչ քաղաքացուն աշխատանքից, աղքատության միակ միջոցից զրկելը նախ մտածել այլընտրանքային աշխատանք առաջարկելու ուղղությամբ, որպեսզի քաղաքացին չդառնա գործազուրկ: Առավել մարդկային որոշում կլիներ, եթե քաղաքաթեը մեկ կամ երկու ամիս ժամանակ տար կրթականերին՝ հարցերը լուծելու համար, խորհրդակցեր նրանց հետ կամ քաղաքի վարդագույն տեսը պահպանելու համար բոլոր կրթակաները նույն ոճով վերանորոգելու համար մատչելի վարկեր գտներ:

Ժամանակի իրավիճակ է ստացվում՝ արդեն որերորդ անգամ քաղաքաթեատրանը նախ որոշում է կայացնում, հետո հանդիպում հասարակական քննադատության եւ միայն դժգոհությունների ալիքից հետո գլխի ընկնում, որ սխալ կետից է սկսել: Ու մինչ մի քանի հազար մարդ դառնում են անգործ, քաղաքաթեատրանում սկսում են նախագծեր մշակել նրանց աշխատանքի տեղավորելու ուղղությամբ: Մինչ նախագծերը մշակվում են, հաստատվում, կառուցվում՝ անցնում են ամիսներ: Այդ ընթացքում մարդիկ հիասթափվում են, բարկանում, վիրավորվում, կորցնում վստահություն եւ հույս իշխանությունների նկատմամբ:

Գլխավոր հարցը, որ այսօր պետք է անհանգստացնի քաղաքաթեին՝ ինչպե՞ս անել, որ կանաչապատ, վարդագույն, բարեկարգ Երեւան կառուցելուն զուգահեռ մարդիկ սոված չմնան:

Կրթակաների ապամոնտաժման վերաբերյալ քաղաքաթեի որոշումն ու մի շարք բացատրությունները պետք է գրավեն իրավապահ մարմինների ուշադրությունը:

Եթե քաղաքաթեատրանից հայտարարում են, որ կան իրավական թերի հիմքերի վրա գործող կրթականեր, նշանակում է՝ նախկին քաղաքաթեները ժամանակին անօրինական գործողություններ են կատարել, օրենք խախտել: Սա արդեն դառնում է իրավական հարց ու պահանջում, որ իրավապահ մարմինները նմանօրինակ կրթակաների փաստաթղթերը ստուգեին, հետաքննություն անցկացնեին ու մեղավոր պաշտոնյաներին համապատասխան պատիժ տային: Բայց դա չի արվում: Դրա փոխարեն ոստիկանությունը աչքի է ընկնում մարդու իրավունքները խախտելով: Օգոստոսի 10-ին Կոմիտաս-Փափազյան փողոցների խաչմերուկում կրթակաների ապամոնտաժման ընթացքում քաղաքաթեատրանի եւ ոստիկանության աշխատակիցների գործունեությանը երեկ անդրադարձել է մարդու իրավունքների պաշտպան **Կարեն Անդրեասյանը**՝ հաստատելով, որ վերոնշյալ կառույցների աշխատակիցները մարդու իրավունքների կոպիտ խախտումներ են կատարել: «Կրթակաների ապամոնտաժման մասին քաղաքաթեատրանից ստացել օրինական հիմքերով եւ գործող պայմանագրերով տարածքը զբաղեցնող կրթակաները, մինչդեռ ծանուցումները պետք է ուղարկվեին միայն անօրինական տեղադրված կրթակաների տերերին՝ փաստաթղթերը նախապես ուսումնասիրելուց հետո: Ապամոնտաժման պահին 13 կրթականերից 5-ի դեպքում կրթակաները ներկայացրել են սեփականության իրավունքի վկայականներ, որոնք հաշվի չեն առնվել», ասված է պաշտպանի գրասենյակի հաղորդագրության մեջ: Անդրեասյանը փաստում է, որ ոստիկանության աշխատակիցները խախտել են կրթակաների գույքային եւ անձնական անձեռնմխելիության իրավունքն ու բռնություն գործադրել միջադեպին ներկա կանանց նկատմամբ:

Մարդու իրավունքների նման կոպիտ ոտնահարումները կանխելու նպատակով ՄԻՊ-ը քաղաքաթեատրանին առաջարկել է մինչ Երեւանի արտաքին տեսքի բարելավումն իրականացնելը իրավաբանորեն ապահովել առանձին անհատների իրավունքների եւ կենսապահովման խնդիրների պաշտպանությունը, գործել այն համոզմամբ, որ ի տարբերություն բիզնեսի կառավարման, որտեղ առաջին հերթին կարեւոր են արդյունքները, հանրային կառավարման դեպքում՝ հաճախ այդ արդյունքից առավել կարեւոր են գործընթացները եւ նպատակին հասնելու միջոցները: Առաջնորդվել սկզբունքով, որ մայրաքաղաքի ղեկավարությունը բոլորինն է՝ հարուստներին ու անապահովներինը: Մինչդեռ քաղաքի բարեկարգման մի շարք նախաձեռնություններ բացասաբար են ազդում սոցիալապես անապահով որոշ խավերի վրա եւ գոհացնում են միջին եւ բարձր կենսամակարդակ ունեցող անձանց: Տարբեր շահեր շոշափող համարձակ նախաձեռնություններում նախապես իրականացված լայն եւ հրապարակային քննարկման արդյունքում հաշվի առնել քաղաքացիական հասարակության տեսակետը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Էս մի ռաունդը կուս գնաց, բերեմ մեկելը

1-ին էջից

Միայն կարող ենք ասել, որ իշխանություն-ՀԱԿ երկխոսության ֆոնին թե՛ իրավապահ մարմինները պետք է պրոֆեսիոնալ աշխատեին այնքան, որ այդպիսի գործողություններ թույլ չտային, թե՛ ՀԱԿ-ի ակտիվիստները, եթե իսկապես նրանց շեֆերը սպասելիք ունեին երկխոսությունից եւ ձեւ չէին անում, պետք է զգուշացված լինեին որեւէ սադրանքի մեջ չհայտնվելու առումով: Այսպես թե այնպես՝ ՀԱԿ-ը երկխոսության հերթական ռաունդից առաջ սպառնում էր, որ եթե ակտիվիստներին ազատ չարձակեն՝ երկխոսությունը կդադարեցվի, իսկ դրան ի պատասխան էլ ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանն ասել էր, թե հոռացումն այնպիսին է (ՀԱԿ-ին նկատի ունի), որ իրենց թվում է՝ բանը բանից անցել է... «ոչ մի բան էլ չի լինի, եւ չեմ կարծում, որ դրանով մեր պետության քաղաքական գործընթացները կխոտրակվեն կամ կխառնվեն», եւ՝ «նման ինտրիգներ Կոնգրեսից ողջ ընթացքում սպասելի էր»: Սահակյանի կարծիքով երկխոսության դադարեցման պրոցեսը ավելի կաղված կլինի իշխանական խմբի ներկայացրած հակափաստարկներին, մանավանդ իշխանական երկխոսող խումբն արդեն հակափաստարկները պատրաստել էր:

Մի խոսքով՝ ՀԱԿ-ի մյուս ակտիվիստներին մեղադրանքի առաջադրումը հայտնի դարձավ երեկ օրվա երկրորդ կեսին, երբ այս բոլոր իրադարձությունների ֆոնին, այնուամենայնիվ, երկխոսության երեկվա ռաունդին մասնակցելու վերաբերյալ որոշումը երեկ առավոտյան ՀԱԿ-ն արդեն կայացրել էր: Ավելի վաղ մի ծավալուն փաստաթղթով ՀԱԿ-ը հիմնավորել էր, թե ինչու պետք է Հայաստանում անցկացնել արտահերթ ընտրություններ: Իսկ ահա երեկ կոալիցիոն խումբն էր մի 100-էջանոց հակափաստարկների եւ առարկությունների փաստաթուղթ ներկայացնելու, թե ինչու չպետք է անցկացնել արտահերթ ընտրություններ: Երեկ երկխոսական հերթական ռաունդը տեւեց մոտ երկու ժամ (նախորդ ռաունդների չորս կամ հինգ ժամերի համեմատ դա ակնթարթ է), որից հետո ՀԱԿ-ի Լեւոն Զուրաբյանն ու իշխանական խմբի ղեկավար Դավիթ Հարությունյանը միասին մոտեցան լրագրողներին, համատեղ հայտարարություն արեցին (Լեւոն Զուրաբյանի շուրթերով), թե այսպես ու այսպես, քննարկել ենք ոստիկանության աշխատակիցների եւ ՀԱԿ-ի ակտիվիստների միջեւ տեղի ունեցած միջադեպը՝ նախնական պայմանավորվածության հանգելով շարունակել քննարկումն ուրբաթ՝ օգոստոսի 19-ին: Միաժամանակ երկխոսողները պայմանավորվածություն են ձեռք բերել ձեռնպահ մնալ միջադեպի մանրամասները մեկնաբանելուց, այնպես որ լրագրողների հարցերին երկխոսողները չպատասխանեցին: Իշխանական կողմն իր հակափաստարկները փաստորեն չի ներկայացրել, եւ միակ քննարկվող նյութը եղել է ՀԱԿ-ի ակտիվիստների ձերբակալությունը:

Մ. Խ.

Orange հիմնադրամը եւ Հայկական ակնաբուժության նախագիծը մեկնարկում են Շիրակի մարզի բնակչության անվճար ակնային զննումների եւ բուժումների համատեղ ծրագիրը

Երեկ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում մեկնարկեց Orange հիմնադրամի եւ Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) համատեղ ծրագիրը, որի նպատակն է Շիրակի մարզի բնակիչների համար անցկացնել անվճար ակնային զննումներ եւ իրականացնել բուժումներ սոցիալապես անապահով անձանց համար:

ՀԱՆ-ի ակնաբուժական խմբերը կայցելեն Շիրակի մարզի երկու քաղաքային եւ 44 գյուղական համայնքներ. օգոստոսի 16-ից 20-ը՝ Անիի շրջան, օգոստոսի 22-ից 31-ը՝ Արթիկի շրջան, սեպտեմբերի 1-ից 14-ը՝ Ախուրյանի շրջան, սեպտեմբերի 14-ին եւ 15-ին՝ Աշոցք եւ Ամասիա: Աչքի շարժական հիվանդանոցը կկայանի սեպտեմբերի 6-ից 10՝ Մարալիկում, սեպտեմբերի 12-ից 17-ը՝ Արթիկում եւ սեպտեմբերի 19-ից 30-ը՝ Ախուրյանում:

Ծրագրի շրջանակում երեխաների համար Շիրակի մարզի ինը դպրոցներում ակնային զննումների հետ զուգահեռ կանցկացվեն նաեւ ակնային խնամքի հանրակրթական հասուկ դասընթացներ:

«Երջանիկ ենք միանալ այս գործին, քանի որ ունենք պրոֆեսիոնալ ու գործին նվիրված գործընկերներ, իսկ ծրագրի արդյունքում բազմաթիվ մարդկանց համար կյանքը նոր գույներ կստանա: Տեսողական խնդիրներ ունեցողներն Orange հիմնադրամի հոգածության

կենտրոնում են ոչ միայն Հայաստանում, այլեւ բազմաթիվ այլ երկրներում, ուր գործում է հիմնադրամը: Ակնաբուժությունը նոր ոլորտ է Orange հիմնադրամի համար Հայաստանում, ու մենք ակնկալում ենք, որ այս ծրագրի հաջողության դեպքում մեր համագործակցությունը շարունակական կդառնա: Բոլորին կոչ ենք անում այցելել եւ ստուգել տեսողությունը, նույնիսկ եթե կոնկրետ խնդիրներ այս պահին չունեն. կանխարգելումն ավելի հեշտ է, քան բուժումը, երբ տեսողությունն արդեն վատացած լինի», ասաց Orange Արմենիա հիմնադրամի գլխավոր քարտուղար **Նազարեթ Սեֆերյանը**:

«Հայկական ակնաբուժության նախագիծն արդեն չորրորդ անգամ է այցելում Շիրակի մարզ: Նախորդ երեք այցելությունների ժամանակ մեզ հաջողվել է հետազոտել շուրջ 17 հազար բնակչի, իրականացնել շուրջ 1200 վիրահատություն, իսկ մոտ 4000 մարդ ակնոց է ստացել: Orange հիմնադրամի հետ համատեղ այս ծրագրի շրջանակում այս անգամ նախատեսվում է իրականացնել շուրջ 3000 մեծահասակների եւ 1200 երեխաների ակնային զննումներ, կատարել մոտ 250 վիրահատություն եւ լազերային բուժումներ, ինչպես նաեւ տրամադրել շուրջ 1200 ակնոց: Անչափ կարեւոր է նշել, որ Orange հիմնադրամի աջակցությամբ այս անգամ նաեւ հնարավոր կլինի ակնային զննումներ իրականացնել դպրոցներում երեխաների համար, ինչը մեծ նշանակություն ունի ակնային խնդիրների կանխարգելման գործում»,- ասաց Հայկական ակնաբուժության նախագծի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Նունե Ենիազարյանը**:

Շիրակի մարզում ՀԱՆ-ի աշխատանքերին աջակցելու համար Orange հիմնադրամը տրամադրել է 9 միլիոն դրամ: Շարժական հիվանդանոցը, որտեղ կիրականացվեն բուժումներն ու վիրահատությունները, զինված է ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով՝ ղեկավարում է Երեւանի Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի բժիշկ Ասատուր Հովսեփյանը:

Բնակչության ակնային զննումների աշխատանքներում ՀԱՆ-ը նաեւ ակնկալում է տեղի ակնաբույժների ներգրավումը, ովքեր կաջակցեն բուժման եւ ակնոցների կարիք ունեցող մարդկանց հայտնաբերման գործում:

Լրացուցիչ տեղեկությունների համար Շիրակի մարզի բնակիչները պետք է հետեւեն իրենց համայնքներում փակցված հայտարարություններին եւ տեղի ԶԼՄ-ների հաղորդումներին, ինչպես նաեւ դիմեն տեղի բուժկետ կամ մարզպետարանի առողջապահության բաժին:

Աշխատանքների եւ այցերի ստույգ ժամանակացույցը կարելի է գտնել www.eyecareproject-armenia.com կայքում:

«Անկախ Ղարաբաղի խանության» հարցի շուրջը կամ «հուշագիր» Էլնուր Ասլանովի համար

Վերջերս ստեփանակերտցի դպրոցական Ադելինա Ավագիմյանը նամակ էր գրել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին: Միակ հարցը, որ հուզել է աղջկան, այն է, թե ինչո՞ւ է Իլհամ Ալիեւը նորից արցախցիներին սպառնում պատերազմով: Այս շաբաթ պարզ հարցին պատասխանելու փոխարեն Իլհամ Ալիեւի աշխատակազմի բաժնի վարիչ Էլնուր Ասլանովը հեղինակել է մի հերթական «ագիտ-հուշագիր», որտեղ խոսք է գնում «այն ժամանակվա ադրբեջանցիների կողմից ստեղծված պետական կազմավորման» մասին, որի «ղեկավարները 18-րդ դարի վերջին հիմնադրել են Խանքենդին»:

Դիմելով Ադելինա Ավագիմյանին, Ասլանովը, փաստորեն, «ընդդիմախոսում է» բոլոր արցախցիներին, հայերին՝ առհասարակ. «Դու գրում ես, որ ծնվել եւ ապրում ես Ստեփանակերտում: Իրականում քաղաքը կոչվում է Խանքենդի... Այն առաջացել է որպես խանի ընտանիքի եւ մերձավորների համար հանգստի ավան: Խաների հարմարության համար խանության մայրաքաղաք Փանահաբադից, ներկայիս Շուշա քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, լեռնալանջերին առաջին դղյակները են հիմնադրվել, այստեղ ժամանակ առ ժամանակ ապրել է միայն խանի ընտանիքը, եւ գյուղն ստացել է Խանքենդի անվանումը»: Մի՞թե Էլնուր Ասլանովը նույնիսկ Լեռնային Ղարաբաղի քարտեզը չի նայել, նախքան կգրեր այդ միտքը: Չէ՞ որ Ստեփանակերտն, այո, Շուշիից մի քանի կիլոմետր հեռավորության վրա է, բայց տեղադրված է վերջինիս համեմատ ցածրադիր տարածքում, որտեղ ոչ մի լեռնալանջ էլ չկա: Այսինքն, տեղանքը չէր կարող Շուշիի «խան»-երի համար հանգստավայր լինել, քանի որ Շուշին հենց հանգստավայր էր: Իսկ եթե «խան»-երն, այնուամենայնիվ, նույնիսկ Շուշիում էին շոգում, ապա ամառանոցի համար տեղ պիտի ընտրած լինեին Քիրսի լեռնալանջերը: Իսկ այդ մասին լռում է անգամ ադրբեջանական պատմագրությունը:

Ի՞նչ իմաստ ունի այդ անգրագետ դիտարկումը: Որպեսզի «ապացուցվի», որ «Ղարաբաղի խաները ոչ միայն Շուշին են հիմնադրել, այլեւ Խանքենդին»: Փառք աստծո, ադրբեջանցի համարվող Միրզա Ադիգյոզալ-բեկը, որ եղել է Իբրահիմ «խանի վեզիրը» եւ գրել իր տրոջ ու նրա տոհմի պատմությունը, հստակ վկայություն է թողել այն «աշխարհաշեն» գործերի մասին, որ կատարել են Փանահը եւ նրա որդի Իբրահիմը: Ահա Փանահին վերագրված կառուցումների ցանկը. «Առաջին՝ Բայաթ ամրոցը (որի տեղորոշման հարցում գլուխ չեն հանում անգամ ադրբեջանցի «ոսկեխույզ»- ուսումնասիրողները- Վ. Ա.), շուկան, բաղնիքը, պատերը եւ շինությունները, որ կառուցվել են հրակայուն աղյուսով: Այժմ (19-րդ դարի կեսերին- Վ.Ա.) կարելի է միայն աննշան մնացորդներ տեսնել: Երկրորդ՝ Շահբուլաղի ամրոցը, աղբյուրի մոտ մզկիթը, բաղնիքը, քաղաքային շենքերը եւ շուկան, որ կառուցվել են քարից եւ կրից: (Այդ «կառույցներ»-ից ոչինչ չի պահպանվել գոնե մինչեւ 19-րդ դարավերջ): Երրորդ՝ Շուշիի նախկին ամրոցի պատերը (ադրբեջանցի հեղինակն այստեղ չի՞ ակնարկում, որ Շուշիում մինչեւ Փանահի հայտնվելը եղել է հին ամրոց, որի պատերն է միայն ամրացրել «խան»-ը) եւ մի շենք, որ ներկայումս (հեղինակի օրոք- Վ.Ա.) օգտագործվում է որպես զորքերի (արդեն՝ ռուսական- Վ.Ա.) ցորենի համար պահեստ»: Իսկ ինչո՞վ է «անմահացել» Փանահի որդի Իբրահիմը: Ահա. «Առաջին՝ մեծ մզկիթը, որ կառուցվել է 1868/69 թվականներին, երբ այն քայքայվել է, վերականգնվել է նրա պատվելի դստեր՝ Գովհար-աղայի կողմից եւ նախկինից ավելի լավ տեսք ստացել (այսպիսով, Շուշիի մզկիթը ոչ ավելի, քան մեկուկես դարի հնության կառույց է- Վ.Ա.), երկրորդ՝ Շուշիի ամրոցի պատերը՝ կառուցված 1783-84թ.թ.: Կառուցումը տեւել է երեք տարի: Այժմ (իր օրոք- Վ.Ա.) պետական (ցարական- Վ.Ա.) ծառայողները վերականգնել են դրանք: Որոշ տեղերում մնացել են խանական պատերի հետքերը, երրորդ՝ Ասկերանի զույգ բերդերը՝ կառուցված 1788/89թ.թ.՝ երկու սարերի միջեւ, որտեղով հոսում է Կարկառ գետը: Եթե պատերազմի ժամանակ այդ ամրոցներում լինի անգամ փոքրաթիվ հետեւակ, ապա թշնամին չի կարող դրանց կողքից անցնել դեպի Շուշի, չորրորդ՝ լեռներում՝ Խազինե կիրճում կառուցված շենքը եւ սենյակները, որ քարից եւ կրից կառուցված են քարայրում, այնտեղ միայն մի ճանապարհ է տանում, հինգերորդ՝ Խանբաղիի շենքը, որը Շուշիի ամրոցից մի փարսախ հեռավորության վրա է, վեցերորդ՝ Աղդամի այգու պատերը՝ Փանահ խանի եւ նրա երեխաների գերեզմանների վրա մեծ կամարներով եւ ջրանցքներ»: Ինչպես տեսնում ենք, իրադարձություններին ականատես եւ Իբրահիմի մոտ «վեզիր» ծառայած հեղինակն անգամ չգիտի «Խանքենդիում կառուցված դղյակների եւ այլ շինությունների» մասին: Եթե այդպիսիք եղած լինեին, նա անպայման կհիշատակեր: Քանի որ չի զլանում նույնիսկ «այգու պատերը» համարել «հիշատակության արժանի»: Միակը, որ ներկայիս Ստեփանակերտի տարածքում «խանի մասին հիշատակություն» կարելի է համարել, դա «Խանբաղի» անվանումն է, բայց նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում դժվար է մեկ «շենքը» համարել «ամառանոցային դղյակներ», առավել եւս՝ «ավան» կամ «գյուղ»:

Իր «հուշագրում» Էլնուր Ասլանովը բնորոշ բթամտությամբ վերստին շահարկում է «Ղարաբաղի հայերի եկվոր լինելու» թեման: Նա, իհարկե, «մեծահոգաբար» չի ժխտում, որ «Ղարաբաղում հայեր նույնպես ապրել են, բայց նրանք կազմել են ընդհանուր բնակչության չնչին փոքրամասնությունը»:

Այժմ, դիմելով բացառապես միայն ադրբեջանցի վերոհիշյալ հեղինակի օգնությանը, փորձենք պարզել, թե ով երբ եւ ինչպես է հայտնվել Ղարաբաղում: Փանահի մասին նա գրում է, որ «Բայաթ ամրոցում է հավաքել իր ընտանիքը, հարազատներին, ավագներին: Շրջակայքում ապրող մարդիկ, անգամ Թավրիզի եւ Արդաբիլի մարզերի արհեստավորների եւ բնակչության մեծ մասը, լսելով Փանահ խանի հաջողությունների, մարդկանց հանդեպ նրա վերաբերմունքի եւ մարդկանց հանդեպ սիրո մասին, իրենց ընտանիքների հետ գալիս են Բայաթ»:

Պետք է հուսալ, որ Ասլանովը քարտեզի վրա գտի գոնե իրական Թավրիզ եւ Արդաբիլ քաղաքների տեղը: Հակապես այդ մարդիկ են կազմել Փանահի «իլաթը», որը հետագայում նրա հետ տեղափոխվել է Տիգրանակերտ- Թառնակուտ, որին ադրբեջանցիները Շահբուլաղ են ասում, ապա եւ՝ Շուշի: Եվ դա եղել է Ղարաբաղում հայտնված առաջին «ադրբեջանցի» բնակչությունը: Փաստը, որ Շուշիի «ադրբեջանական» բնակչությունը տեղաբնիկ չէ, ընդունել են ծագումով շուշեցի ադրբեջանցի մտավորականներ նույնպես: Էլնուր Ասլանովը, ուզում եմ հավատալ, գոնե ադրբեջանցի դասականներին կարդացել է: Հիշեցնեմ նրան Յուսիֆ Վեզիր Չեմենզեմենլիի «Արյան մեջ» վեպը, որտեղ նկարագրված են Իբրահիմի արյունոտ կառավարման ժամանակաշրջանի դեպքերը: Խոսելով Իբրահիմի «վեզիր» մոլլա Փանահ Վագիֆի տոհմաբանությունից, Չեմենզեմենլին գրել է. «... Տանջահար ղազախցիները չգիտեին, թե որտեղ հանգիստ գտնեն: Ղարաբաղի խանության ստեղծումն ու Շուշի ամրոցի կառուցումը 1754թ. հույս էր տվել, որ քաղաք-ամրոցում, որ գտնվում էր բարձր լեռներում, մեծ ճանապարհներից մի կողմ քաշված, մարդիկ վերջապես հանգիստ կգտնեն, եւ ղազախցիներն սկսեցին Ղարաբաղ տեղափոխվել: Վագիֆը, Սաաթլի տոհմից ուրիշ տասնյոթ ընտանիքների հետ տեղափոխվել է Շուշի, հիմնել «մահալ», որն այդպես էլ կոչվել է՝ Սաաթլի»:

Մի քանի տարի առաջ այցելելով Արցախ, ԼՂՀ նախագահի մոտ ընդունելությանը պրոֆ. Ֆարհադ Բադալբեյլին, որի պապը ծնվել է Շուշիում, հպարտությամբ ասել է, որ ինքը «ղաջարներից է»: Իսկ թե ովքեր են «ղաջարները» եւ որն է նրանց հայրենիքը՝ գիտի, կարծում եմ, նույնիսկ Էլնուր Ասլանովը: Ցանկության դեպքում նման բազմաթիվ փաստեր եւս կարելի է վկայաբերել: Առայժմ, սակայն, բավարարվենք այսքանով:

ՎԱՀԲԱՐ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Յուրաքանչյուր արցախցի երեխայի՝ մեկ համակարգիչ

ՆՈՒՌ. սա «Ֆրանֆուլ Արմենիա» հիմնադրամի «Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագրի հաղավումն է: Ծրագրի ղեկավար **Սեբաստիան Արիաս Դյուվալի** խոսքով՝ անվանումն ավելի հոգեհարազատ է հայերին, քանզի կրում է հայերի մեջ մեծ տարածում ունեցող մրգի անունը: Ծրագիրը գործում է աշխարհի շուրջ 40 երկրներում, իսկ Արցախում գործարկելու մեկնարկը տրվեց օգոստոսի 15-ին Ստեփանակերտում:

Նման պայմանագիր կնքվել է այս տարվա հունվարին՝ ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի եւ սփյուռքահայ հանրահայտ գործարար Էդուարդո Էռնեկյանի միջեւ: ՖԱՀ-ը ներկայացնում է «Նոր ուսումնական ռազմավարության» ընդհանուր գաղափարը եւ նպատակ ունի փոխելու ապագա կրթական համակարգը: Մեկ համակարգիչ յուրաքանչյուր երեխայի /ՄՀՅԵ/ կրթական ծրագիրը մշակվել է ԱՄՆ Մասաչուսեթսի Տեխնոլոգիաների ինստիտուտում: Այն հաջողությամբ համակցել է կառուցողականությունը ժամանակակից մաչելի դյուրակիր համակարգչի՝ XO-ի ստեղծման հետ, որը հատուկ նախագծվել ու մշակվել է կրթական նպատակներով: ՆՈՒՌ ծրագիրը XO դյուրակիր համակարգիչներ է տրամադրելու Արցախի դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներին ու նրանց ուսուցիչներին, իսկ դպրոցներում ինտերնետ կապն ապահովելու է ԼՂՀ կառավարությունը:

Առաջին փուլում, ինչպես մամուլի ասուլիսի ժամանակ տեղեկացրեց ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար **Վլադիկ Խաչատրյանը**, համակարգիչներ կստանան ստեփանակերտցի եւ շուշեցի կրտսեր տարիքի դպրոցականները, 160 ուսուցիչներ կանցնեն վերապատրաստման համապատասխան դասընթացներ: Նախարարի խոսքով, նախատեսված էր ծրագիրը գործարկել սեպտեմբերի 1-ից, սակայն քանի որ համակարգիչները պատվիրված են եղել Ճապոնիայում, ուստի այնտեղ տեղի ունեցած երկրաշարժի պատճառով ծրագրի իրականացումը մի քիչ ուշացել է: Համակարգիչների առաջին խմբաքանակը տեղ կհասնի հոկտեմբերի կեսերին, իսկ երկրորդ խմբաքանակը նախատեսվում է ստանալ նոյեմբերին: «Բոլոր դեպքերում, ծրագիրը ուսումնական երկրորդ կիսամյակում կսկսի լիաժեք գործել»,- հավաստիացրեց նախարարը:

Նախքան լրագրողների հարցերին պատասխանելը Սեբաստիան Արիես Դյուվալն առաջարկեց դիտել այդ մասին պատմող տեսաֆիլմը, որից հետո, ծրագրի հետ կապված, տվեց որոշ պարզաբանումներ: Մասնավորապես, պարոն Դյուվալի խոսքով, երեխաներին տվելիք համակարգիչները /դրանց նմուշները ցուցադրվեցին ասուլիսի ժամանակ/ թեպետ նման են խաղալիքներին, սակայն հագեցած են երկու տասնյակից ավելի համակարգչային, այդ թվում՝ հայերեն ծրագրերով ու բավականին դիմացկուն են: Երեխան ցանկության դեպքում այն կարող է իր հետ տանել տուն, որից օգտվելու հնարավորություն կունենան նաեւ տնեցիները: Չորրորդ դասարանն ավարտելուց հետո աշակերտը կշարունակի իր մոտ պահել համակարգիչը մինչեւ դպրոցն ավարտելը, եթե, իհարկե, մինչ այդ տեխնոլոգիական թարմացումների անհրաժեշտություն չառաջանա: Վերջնական արդյունքում, նշեց պարոն Դյուվալը, բոլոր աշակերտներն էլ կունենան համակարգիչներ: «Համակարգիչը ոչ միայն կրթական մակարդակը, այլեւ կյանքի որակը բարձրացնելու լավագույն միջոց է»,- շեշտեց ՖԱՀ-ի պաշտոնական ներկայացուցիչը:

Ո՞վ պիտի պատասխան տա համակարգիչը փչանալու դեպքում. լրագրողների տված այս հարցին պատասխանելով, Ս. Ա. Դյուվալը նշեց, որ եթե դրանք տրվում են անվճար հիմունքներով, ապա բնավ չի նշանակում, թե պիտի անփութություն ցուցաբերել: Եթե համակարգիչը դիտավորյալ փչացրած լինի աշակերտը, ապա նրա ծնողներից կգանձվի դրա արժեքի մի մասը, որի ամբողջական արժեքը կազմում է 270 ԱՄՆ դոլար, իսկ եթե այն աշակերտի մեղքով չի փչացել, ապա հիմնադրամի միջոցներով կնորոգվի կամ էլ նորը կտրվի նրան: Հարցի շրջանակում ԼՂՀ ԿԳ նախարար Վ. Խաչատրյանն ավելացրեց, որ այսօր Արցախի մի շարք դպրոցներում բարեգործական խողովակներով ստացված համակարգիչներ կան, որոնց միշտ խնամքով են վերաբերվում աշակերտները: Այդ հարցում, անշուշտ, կարեւոր է նաեւ ուսուցիչների ու ծնողների վերահսկողական դերը, միաժամանակ նշեց նախարարը:

Լրագրողները նաեւ մտահոգություն արտահայտեցին այն առումով, որ կրտսեր տարիքի դպրոցականներին հասանելի կդառնան արգելված կայքերը: Ինտերնետի բացասական ազդեցությունը չբացառելով, պարոն Դյուվալը տեղեկացրեց, որ երեխաներին մատուցվող ինտերնետ ծրագրերը հնարավորինս զտված կլինեն: Միեւնույն ժամանակ, նրա խոսքով, ծնողների եւ ուսուցիչների վերահսկողությունն այս հարցում էլ պետք է շեշտված լինի:

ՆՈՒՌ ծրագրով նախատեսվում է հաջորդ փուլում համակարգիչներով ապահովել արցախցի 3.600 աշակերտների, ինչի շնորհիվ հավասար հնարավորություն կստեղծվի դպրոցների ամենօրյա դասերում տեխնոլոգիաների ներգրավման համար: Իսկ ժամանակացույցը կհամաձայնեցվի ԼՂՀ կառավարության հետ: Դարձյալ կառավարության աջակցությամբ, գերարագ ինտերնետ կապով կապահովվեն հանրապետության մյուս բնակավայրերը եւս, որի իրագործումից հետո ՆՈՒՌ ծրագիրը XO դյուրակիր համակարգիչներ կտրամադրի նաեւ այդ կրթօջախներին:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ԱԶԳ

Միջազգային

Աշխարհի «տանիքը»

Չնայած որոշ ուշացումով, ռուսասանյան լրատվամիջոցները հաղորդեցին, որ Շվեյցարական Սենտ-Մորից քաղաքում վերջերս տեղի է ունեցել Բիլդերբերգյան ակումբի 58-րդ ամենամյա նիստը: Ներկա հավաքի հատկանշական կողմը համարվեց այն, որ առաջին անգամ մասնակցում էին Չինաստանի ներկայացուցիչները, ինչը վկայում է այդ երկրի հարաճուն հեղինակության մասին: Ռուսաստանից պաշտոնական ներկայացուցիչ չի եղել: Նիստին ներկա է եղել ռուսաստանցի միլիարդատեր Ալեքսեյ Մորդաշովը, սակայն, չգիտես ինչու, Շվեդիայի կողմից:

Ինչո՞ւ են ռուսաստանյան ՁԼՄ-ները սեւեռուն ուշադրություն դարձնում Բիլդերբերգյան կոչված այդ միջազգային կազմակերպության աշխատանքին: Դա հասկանալու համար անհրաժեշտ է պատմական էքսկուրս կատարել ակումբի հիմնադրման ու գործունեության վերաբերյալ, քանզի, ինչպես նշել է նրա հիմնադիրներից մեկը՝ հանրահայտ ֆինանսական մագնատ Դեյվիդ Ռոկֆելլերը, խոսքը վերաբերում է աշխարհի ինտելեկտուալ վերնախավի եւ բանկիրների վերազգային գերագույն իշխանությանը, եւ համարվում է աշխարհը կառավարող կարեւորագույն հատատությունների մեկը՝ ընդունակ կանխորոշելու ողջ մարդկության կյանքի հիմնական ուղղությունները:

Բիլդերբերգյան ակումբը ստեղծվել է սառը պատերազմի թեժ տարիներին՝ 1954 թվականին: ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների նախաձեռնությամբ մոլորակի մասշտաբով 70 գերազդեցիկ անձինք՝ քաղաքագետներ, բանկիրներ, բիզնեսմեններ, մեդիամագնատներ եւ այլք, հավաքվել են հոլանդական Օստերբեկ քաղաքի «Բիլդերբերգ» հյուրանոցում (այստեղից է գալիս ակումբի անունը) եւ հիմնադրել «եվրոպական արժեքներ» պաշտպանող մի կազմակերպություն, որի հեռահար նպատակն էր ստեղծել եվրոպական գերտերություն, պայքարել կոմունիզմի՝ Խորհրդային Միության դեմ, ընդունել ստրատեգիական որոշումներ ֆինանսական, ռազմական, սոցիալական խնդիրների վերաբերյալ, շրջանցելով աշխարհի առաջատար երկրների կառավարական մարմիններին: Վերջնական նպատակ էր հայտարարված ձեւավորվել որպես «Համաշխարհային կառավարություն»:

Բիլդերբերգյան ակումբը կառուցված է մասոնական օթյակի սկզբունքով եւ ներառում է երեք աստիճան: Ամենանեղ առանցքային շրջանակը խորհրդակցական կոմիտեն է, որի մեջ մտնում են մոտ 10 հոգի, որոնք միայն իրապես ու լիովին գիտեն կազմակերպության իսկական նպատակները եւ ուղղությունները ու տնօրինում են բոլոր լիազորությունները ամենամյա նիստերի միջեւ: Որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի, թե ազդեցության ինչ մակարդակ ունի կոմիտեն, ներկայացնենք նրա ներկայիս մշտական անդամներին՝ Էդմունդ դը Ռոտշիլդ, Դեյվիդ Ռոկֆելլեր, Զբիգնեւ Բժեզինսկի, Փոլ Վուլֆովից, Հենրի Քիսինջեր, Ռիչարդ Հոլբրուկ, Էտիեն Դավինիոն, Հենրի Գեյնց, Ռոմանո Պրոդի եւ ուրիշներ (պատահական չէ, որ շատ փորձագետներ ակումբի միջուկը համարում են ԱՄՆ-ի իրական վերնախավը):

Ակումբի 383 անդամներից 128-ը ամերիկացիներ են, մնացածը՝ եվրոպացիներ ու ասիացիներ: Տարվա մեջ մեկ անգամ հատուկ հրավերով նրանցից 130-ը (կազմը ամեն անգամ թարմացվում է)՝ գործող ու պաշտոնաթող նախագահներ, վարչապետներ, թագավորներ, թագաժառանգներ, դեսպաններ, խոշորագույն կորպորացիաների ղեկավարներ եւ այլք, հավաքվում են նիստի, որտեղ ոչ պաշտոնական, անբռնազբոսիկ մթնոլորտում քննարկում են «ընթացիկ պահի» խնդիրները, շփվում, մտիկից ծանոթանում միմյանց հետ: Նկատի ունենալով, որ, ինչպես ասվեց, նրանք հիրավի հսկայական ազդեցության տեր մարդիկ են, ապա լրագրողները սիրում են նրանց հանդիպումն անվանել «Աշխարհի նախարարների սվերային խորհուրդ»:

Նիստերն անցկացվում են գերգաղտնիության պայմաններում, ոչինչ չի գրառվում կամ տեսագրվում, ոչ մի տեղեկատվություն չի հրապարակվում, ոչ մի հայտարարություն չի արվում, արգելված են բանավեճերը նիստերից հետո, հրավիրվում են միայն «իրենց» լրագրողները, Համաշխարհային խնդիրների վերաբերյալ ընդունված որոշումներին՝ ոչ պաշտոնական հաշվետվությանը ծանոթանում են միայն ակումբի անդամները: Մշակվում է համատեղ կողմնորոշում, որը կրում է պարտադիր բնույթ եւ իրագործվում է նրանցից յուրաքանչյուրի կողմից: Ակումբն իր որոշումների կենսագործման համար կարող է օգտագործել Մեծ ութնյակի հանդիպումները, Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, ազգային կառավարությունների եւ այլն:

Իսկ հիմա նորից դառնանք այն հողությանը, թե ինչու են Ռուսաստանում տեղ տալիս Բիլդերբերգյան ակումբի գործունեությանը: Բանն այն է, որ հենց սկզբից այդ կազմակերպության գլխավոր խնդիրներից մեկն էր պայքարել կոմունիզմի գաղափարների, Խորհրդային Միության դեմ: Ի վերջո հսկայական է նրա դերը ԽՍՀՄ-ի քայքայման գործում: Վերաբերմունքը չի փոխվել ներկա Ռուսաստանի նկատմամբ. հիմնադրման օրվանից ակումբի 16 նիստերի հիմնական թեման եղել է քաղաքական-տնտեսական կացությունը Խորհրդային Միությունում եւ Ռուսաստանում ու քայքայիչ ներգործությունը դրա վրա: 90-ական թվականներին, օրինակ, հատուկ քննության առարկա են եղել աշխատանքը Գորբաչովի շրջապատի հետ: Գորբաչովի հնարավոր պաշտոնաթողությունը, Ելցինի նկատմամբ միասնական վերաբերմունքի մշակումը եւ այլն: Տակավին հիմնադիր փաստաթղթերում նշվել է, որ նախ եւ առաջ անհրաժեշտ է վերահսկողություն սահմանել հողագնդի միջուկի՝ Ռուսաստանի նկատմամբ: Ռուսաստանին՝ այդ հսկայական մայրցամաքային զանգվածին տիրելու համար պետք է մշակել ստրատեգիա, որին համապատասխան ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները վիշապի պես պիտի ճնշում գործադրեն նրա վրա բոլոր կողմերից: Եվ առհասարակ, անգլոսաքսոնական ռասայի՝ համաշխարհային գերիշխանություն հասնելու ճանապարհին գլխավոր ու բնական թշնամին համարվում է ռուս ժողովուրդը: Պետք է արվի ամեն ինչ, որ Ռուսաստանը մուտք չգործի Եվրոպա:

Բիլդերբերգյան ակումբի հակառուսական գործողությունները կարող են լինել ինչպես բացահայտ ու մասշտաբային, այնպես էլ ողողարկված՝ նրբաճարտար միջոցներով: Մոսկովյան թերթերից մեկը բերել էր մի այսպիսի դրվագ: Բիլդերբերգցիների «բնապահպանական» հարձակումներից հետո Գորբաչովի թույլտվությամբ (կարճաստեսությամբ) Ռուսաստանում սնկի պես սկսեցին աճել տխրահռչակ «Գրինփիսի» կլոնները՝ զանազան «կանաչներ»: Սրանք ակտիվորեն սկսեցին բնակչությանը սարսափեցնել սալմոնելեզով համատարած վարակվելու վտանգով: «Գիտակցության զանգվածային ճնշման» այդ զենքի միջոցով փլուզվեց «Պտիցեպրոմը», եւ լայն քայլերով երկիր մուտք գործեցին «Բուշի տոտիկները թե ոտքերը»: Նույն կանաչների միջոցով շրջանառության մեջ դրվեց նաեւ նիտրատի սպառնալիքը, կոլտնտեսականների աճեցրած մրգերն ու բանջարեղենը համարվեցին վտանգավոր, սկսվեց դրանց ներմուծումը եվրոպական մի շարք երկրներից, ընդ որում, դրանց մեջ նիտրատի պարունակությունը 6 անգամ գերազանցում էր խորհրդային ցուցանիշը: Բնական է՝ չէր ազդարարվում, որ որոշ բիլդերբերգցիներ դոլարային մեծ շահագրգռություններ ունեին այդ բիզնեսում:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Հ.Գ.- Բիլդերբերգյան ակումբի 2007 թվականի կոնֆերանսը տեղի է ունեցել Սամբուլում, որտեղ այլեւայլ խնդիրների հետ մեկտեղ քննարկվել են կլիմայի գլոբալ փոփոխության, Թուրքիայի դերը Եվրամիության մեջ հարցերը: Ակումբի այս տարվա նիստին ներկա է եղել Թուրքիայի 4 ներկայացուցիչ: Ի դեպ, հողագնդի կլիմայի տաքացման գլխավոր պատճառը հայտնի մեդիամագնատ, բիլդերբերգցի Թեդ Թերները համարել է... բնակչության մեծաքանակությունը եւ առաջարկել է այն կրճատել 2/3-ով, հասցնելով 2 միլիարդի: Սա չի՞ հիշեցնում Հայաստանի «գերբնակեցվածության» վերաբերյալ նախկինում արված որոշ «հայրենական» հայտարարություններ...

Լիբիացի ապստամբների դեսպանը հավատարմագրվել է ԱՄՆ-ում

ԱՄՆ-ը պաշտոնապես հավատարմագրել է լիբիացի ապստամբների Ազգային անցումային խորհրդի դեսպան Ալի Աուջալիին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Պետդեպարտամենտի ներկայացուցիչ Վիկտորիա Նյուլանդի խոսքերով, Աուջալիի հավատարմագրման հետ մեկտեղ տեղի է ունեցել Լիբիայի դեսպանատան բացման արարողություն: Ակնկալվում է, որ դիվանագիտական այցագիր ստացած Ալի Աուջալին հնարավորություն կունենա օգտվելու Մուամմար Քադդաֆիի դիվանագետների հաշիվներից, որոնցում պահվում է 10-12 մլն դոլար:

Քադդաֆիի վարչակարգի օրոք ԱՄՆ-ում Լիբիայի դեսպանը եղած Ալի Աուջալին ապստամբների կողմն էր անցել 2011-ի փետրվարին: Վաշինգտոնում Լիբիայի դեսպանատունը փակվել էր 2011-ի մարտի 10-ին:

Հունիսին ԱՄՆ-ը Լիբիայի ԱԱԽ-ն այդ երկրի միակ օրինական իշխանություն էր ճանաչել մինչեւ այնտեղ ժամանակավոր կառավարության ձեւավորումը: Հուլիսի 27-ին նույն քայլին դիմել էր Մեծ Բրիտանիան: Լոնդոնում Լիբիայի դեսպանատան բոլոր աշխատակիցներին հրամայվել էր լքել երկիրը: Լիբիայի դեսպանն արտաքսվել էր դեռ մայիսին՝ Տրիպոլիում բրիտանական ներկայացուցչության վրա կատարված հարձակումից հետո: Օգոստոսին լիբիացի դիվանագետները հեռացել էին Կանադայից: Ավելի վաղ Քադդաֆիին հավատարիմ դիվանագետները արտաքսվել էին Ֆրանսիայից եւ Գերմանիայից:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Կեմերոնը խոսեց հասարակության բարոյական անկման մասին

Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Կեմերոնը ծրագրային ելույթ է ունեցել օգոստոսի 6-14-ը երկրի քաղաքներում տեղի ունեցած անկարգությունների կապակցությամբ: Վարչապետի խոսքերով՝ անկարգությունների հիմնական պատճառը բրիտանական հասարակության բարոյական անկումն է: Կեմերոնի ելույթի տեսագրությունն առկա է «Սքայ նյուզ» հեռուստաընկերության կայքում:

Ըստ վարչապետի, կառավարությունը ջարդարարներին պետք է պատասխանի ոչ միայն ապահովության միջոցների խստացմամբ, այլեւ սոցիալական ոլորտի բարեփոխումներով: «Մենք անչափ երկար ժամանակ բավարար կամք չենք դրսեւորել, որպեսզի մարդկանց պարզ բացատրենք, թե ինչն է լավ եւ ինչը՝ վատ», խոսքն է Կեմերոնը: Նա «բարոյական անկման» նշաններ է համարում բրիտանական երիտասարդության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են «անպատասխանատվությունը, եսամոլությունը, ուրիշներին հաշվի չառնելով գործելու ձգտումը»:

«Անհայտ երեխաներ: Կարգապահությունից զուրկ դպրոցներ: Չվաստակած պարգեւներ եւ անպատիժ հանցագործություններ: Իրավունքներ առանց պարտականությունների: Մարդկանց անվերահսկելի ընկերակցություններ»՝ սրանք են, ըստ Կեմերոնի, բրիտանական հասարակության խոցելի տեղերը:

Վարչապետի խոսքերով՝ մի կողմից իշխանությունները պարտավոր են խստացնել պատիժները փողոցային ելուզակախմբերի դեմ, մյուս կողմից պետք է աշխատանք կատարվի կրթական հաստատություններում եւ սոցիալական կազմակերպություններում: Դեռահասները պետք է զգան եւ գիտակցեն, որ բարի գործելով՝ իրենք ապահովում են իրենց հանդեպ մարդկանց լավ վերաբերմունքը:

Միայն Լոնդոնում ձերբակալված են անկարգությունների 1400 մասնակիցներ, նշում է BBC-ն: Նրանց մեծ մասին ներկայացվել են մեղադրանքներ: Պաշտոնապես խժդժությունների առիթը Լոնդոնի Տոտենհեմի շրջանում մի գունամորթի սպանությունն է ոստիկանության հետ փոխհրաձգության ժամանակ: Դա պատրվակ դարձավ մի շարք քաղաքներում զանգվածային թալանի, կողոպուտի, խանութների եւ ավտոմեքենաների հրկիզումների համար:

Պ.Ք.

Իսրայելի թույլտվությամբ եգիպտոսն ավելացնում է զորքը Սինայում

Մուբարաքի դատն այլեւս չի ցուցադրվի

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն Եգիպտոսին թույլատրել է Սինայի թերակղզում զորքի թվակազմը մեծացնել այնտեղ կարգուկանոնի պահպանման համար: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը՝ վկայակոչելով տեղական ռադիոկայաններ:

Օգոստոսի 13-ին հազարից ավելի եգիպտացի զինվորներ տեղաբաշխվել են Հյուսիսային Սինայի նահանգում, որպեսզի չեզոքացնեն ծայրահեղական խմբավորումներին. վերջին 6 ամիսներին ահաբեկիչներն առնվազն 4 անգամ գրոհել են այն գազամուղը, որով Եգիպտոսից վառելիք է մատակարարվում Իսրայելին եւ Հորդանանին:

Ահաբեկիչներն աշխուժացել են 2011-ի փետրվարից, երբ Եգիպտոսում բողոքի զանգվածային ելույթներ սկսվեցին Հոսնի Մուբարաքի վարչակարգի դեմ: Նույն ամսին վարչակարգը տապալվեց:

«Նյու Յորք թայմս» թերթի տվյալներով, Հյուսիսային Սինայը նաեւ դարձել է անօրինական բիզնեսի կենտրոն: Վարչակարգի անկումից հետո այստեղ ոստիկանությունը փաստորեն չի գործում: Շրջանում հայտնվել են բազմաթիվ մախանենգներ, որոնք այստեղ բերում են ավտոմեքենաներ քաղաքացիական պատերազմով ճարակված Լիբիայից: Մախանենգ առեւտուրը ծաղկում է Գազայի սահմանի մոտ գտնվող Ռաֆահ քաղաքում, որտեղ չկա որեւէ վերահսկողություն: Հենց Ռաֆահում են տեղաբաշխվելու եգիպտացի հավելյալ 1000 զինծառայողները:

Սինայի թերակղզում եգիպտացի զինվորների թվակազմը սահմանափակված է Քեմպ Դեյվիդի 1979 թ. համաձայնագրերով: Այն ժամանակ Սինայը Եգիպտոսին վերադարձվեց տարածաշրջանի ապառազմականացման դիմաց:

Ինչ վերաբերում է Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքին, որի դատավարությունը սկսվել է օգոստոսի 3-ից, Կահիրեի դատարանն արգելել է այսուհետեւ հեռուստատեսությամբ ցուցադրել դատը: Այդ մասին հաղորդում է «Ալ Ջազիրա» արաբալեզու հեռուստաալիքը:

Բացի դրանից, դատարանը վճռել է միավորել Մուբարաքի եւ նախկին ներքին գործերի նախարար Հաբիբ ալ Ադլիի գործերը: Վերջինիս մեղադրում են ցույցերը գրելիս մարդկանց սպանած լինելու համար: Գործերը միավորվել են զոհերի ընտանիքների փաստաբանների միջնորդությամբ:

Դատական հաջորդ նիստը տեղի կունենա սեպտեմբերի 5-ին: Կլսվեն մեղադրող կողմի փաստարկները: Մուբարաքի հետ դատարան կներկայանա ալ Ադլին:

Մուբարաքը մեղադրվում է լիազորությունների վերազանցման, իշխանության չարաշահման, ինչպես նաեւ հունվար-փետրվարին ցուցարարների սպանությանը մեղսակից լինելու մեջ: Ի դեպ, 83-ամյա նախկին նախագահը ծանր հիվանդ է: Նրան դատարանի դահլիճ էին բերել հիվանդանոցային պատգարակով, քանի որ նա չի կարողանում նստել կամ կանգնել:

Պ. Ք.

Կորեա-ամերիկյան զորավարժություններ

Հարավային Կորեան օգոստոսի 16-ին ԱՄՆ-ի հետ համատեղ սկսել է «Ազատության պաշտպան» ամենամյա զորավարժությունները, հակառակ խաղաղասերների բողոքներին: Դրանք կավարտվեն օգոստոսի 26-ին: Վարժանքների ընթացքում երկու երկրները կմշակեն ԿԺԴՀ միջուկային զենքի ոչնչացմանն ուղղված գործողություններ, պնդում է հարավկորեական Yonhap գործակալությունը:

Փենյանը զորավարժությունների կապակցությամբ Կորեական թերակղզում ստեղծված իրադրությունը անվանել է «վտանգավոր»:

Սակայն Կորեայում ԱՄՆ զինված ուժերի հրամանատարության մամլո տեղեկագրում ասվում է, որ զորավարժությունները բացառապես պաշտպանական բնույթ են կրում: Դրանց մասնակցում են 56 հազար հարավկորեացի եւ գրեթե 30 հազար ամերիկացի զինծառայողներ:

Հարավային Կորեայի զինված ուժերի շտաբների պետերի կոմիտեի ներկայացուցիչը երեկ հայտարարել է. «Այս զորավարժություններով մենք նաեւ փորձում ենք ամրապնդել մեր պաշտպանունակությունը: Մանեւրները Սեուլին կօգնեն ավելի լավ նախապատրաստվել 2015 թվականին, երբ Վաշինգտոնը Սեուլին կփոխանցի պատերազմի ժամանակ սեփական զորքերի օպերատիվ հրամանատարությունն իրականացնելու իրավունքը»:

Պ. Ք.

Մոսկորի բնաբխարհում բացվեց Հրանտ Մաթեւոսյանի արձանը

Օգոստոսի 14-ին Լոռու մարզի Մոսկորի ենթաբերջանի գեղատեսիլ բնության գրկում հայրուրավոր լոռեցիներ միանգամից 3 տոն էին նշում՝ Մոսկորի սրբավայրի (Շամուս գյուղի հարեւանությամբ) Սուրբ Մարիամ Աստվածածին մատուռի հիմնադրման 6-րդ տարեդարձը, մեծանուն գրող Հրանտ Մաթեւոսյանի արձանի բացումը հայրենի բնորրանի գրկում՝ մատուռից փոքր-ինչ հեռավորության վրա եւ Հայ Առաքելական եկեղեցու տաղավար հինգ տոներից մեկը՝ Խաղողօրհնության տոնը: Լոռու մարզի տարբեր բնակավայրերից ու մայրաքաղաքից ժամանած հյուրերը հնարավորություն ունեցան եւս մեկ անգամ ոգեղեն սնունդ ստանալու եւ հիանալու մայր բնության հրաշալիքներով: Տոնակատարություններին մասնակցում էին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, փոխմարզպետ Աղվան Վարդերեսյանը, Գուգարաց թեմի առաջնորդ, գեղաշնորհ տեր Սեղուի եպիսկոպոս Չուլջյանը, ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, լոռվա զավակ Սոս Սարգսյանը, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Սերգո Երիցյանը, Կոմանդոսը՝ գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը, ՀՀ զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի հետախուզության բաժնի պետ, գնդապետ Սամվել Վանեսյանը, Հրանտ Մաթեւոսյանի եղբայրը՝ Համլետ Մաթեւոսյանը, ընտանիքի անդամները, Լոռու մարզպետարանի աշխատակիցներ, ենթաբերջանի համայնքների ղեկավարներ, մտավորականներ, արվեստագետներ, հյուրեր:

Հանդիսությունը վարում էր դերասան, ասմունքող Ջիվան Սարգսյանը:

Օրվա խորհուրդը ներկայացրեց **Սերգո Երիցյանը**:

- Այսօր խորհրդանշական օր է, եւ պատահական չէ, որ նշում ենք միանգամից 3 տոն՝ Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներից մեկը, Սուրբ Մարիամ Աստվածածին մատուռի հիմնադրման 6-րդ տարեդարձը: Իսկ օրվա հիմնական խորհուրդն այն է, որ Մոսկորի նշանավոր զավակներից մեկը՝ Հրանտ Մաթեւոսյանը, քարեղեն տեսքով վերադարձել է հայրենի բնաբխարհի գիրկը: Մեծանուն գրողի արձանն այստեղ տեղադրելու գաղափարը հղացվել է անցած տարի, սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած հանդիսության ժամանակ եւ այսօր այդ մտահղացումը իրականություն է դարձել շնորհիվ մի քանի բարերարների: Այսօր նաեւ մատաղի օրհնություն է կատարվելու, կնեկայացվի նաեւ ազատամարտի հերոսներին նվիրված Սերժ Սոսյանի «Իսկ թիկունքում հող-հայրենին է» գիրքը, ասաց նա:

Օրհնության խոսք հղեց **տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը**:

- Մեր պապերը դարեր շարունակ կառուցել են մատուռներ ու եկեղեցիներ՝ իրենց աղոթքը հնչեցնելու առ Աստված, ասաց նա: Ուրախալի է, որ գալիք սերունդները շարունակում են այդ սուրբ գործը եւ պահպանում այդ մասունքները:

Այս օրը մի խորհուրդ եւս ունի. Արեւմտյան Հայաստանի Մարութա սարի վրա գտնվող նշանավոր Սուրբ Մարիամ Աստվածածին սրբավայր ուխտի են գնում մեծաթիվ հայեր: Ներկաները Գուգարաց թեմի առաջնորդի հետ աղոթք հնչեցրին առ Աստված:

Շնորհավորանքի խոսք ասաց Լոռու մարզպետ **Արթուր Նալբանդյանը**.

- Ցավալի է, որ մեր ազգի արժանավոր զավակներն ըստ արժանվույն չեն գնահատվում իրենց կենդանության օրոք, ուստի անհրաժեշտ է, որ մենք մեր սերունդներին փոխանցենք նրանց մեծ վաստակը, նրանց մեջ սերմանենք մեծերին գնահատելու եւ սիրելու գաղափարը,- նշեց մարզպետը:

Ներկաներին շնորհավորելով տոների առթիվ՝ Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ **Մանվել Միկոյանը** մասնավորապես անդրադարձավ Հրանտ Մաթեւոսյան-արձակագրի գրական ժառանգությանը.

- Նա հայ գրականության, հայ արձակի մեջ յուրօրինակ հեղափոխություն կատարեց: Քաջածանոթ լինելով համաշխարհային գրականությանը եւ իր հոգում ունենալով հայ դասականներին՝ Հրանտ Մաթեւոսյանը կարողացավ հայ արձակը հասցնել մի նոր աստիճանի: Խորհրդային տարիներին չափազանց դժվար էր ազատ խոսք ասել, քննադատել, Հրանտ Մաթեւոսյանին դա բնավ չէր կաշկանդում: Նրա գործերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով՝ Հայոց բնաբխարհի այս անկյունը քաջածանոթ դարձնելով ամբողջ աշխարհին,- ասաց Մ.Միկոյանը: Նա երախտագիտություն հայտնեց Սուրբ Մարիամ Աստվածածին մատուռի հիմնադիր եւ հովանավոր գնդապետ Սամվել Վանեսյանին, որ աջակցել է նաեւ մեծանուն գրողի արձանի կերտմանն ու տեղադրմանը, գործարար Մխիթար Մաթեւոսյանին՝ դարձյալ իր աջակցությունն է ցուցաբերել այս գործին, ինչպես նաեւ Լոռու մարզպետարանին՝ միջոցառման կազմակերպման համար:

- Բարեւում եմ բոլորին, հայեր, լա՛վ եղեք,- իր ողջույնը հղեց **Սոս Սարգսյանը**, ում խոսքն առանձնակի խորհրդավորություն պարգեւեց տոնակատարությանը: Նա, որ Հրանտ Մաթեւոսյանի ստեղծագործության հիման վրա նկարահանված «Մենք ենք, մեր սարերը» համանուն ֆիլմում մարմնավորել է ոսիկանի կերպարը եւ մեծանուն գրողի մտերիմ ընկերներից մեկն է եղել, շատ հիշողություններ ուներ պատմելու:

- Հրանտ Մաթեւոսյանը Թումանյանական մտավորական է, այդ խորությամբ, այդ նվիրվածությամբ, մեծությամբ,- ասաց Սոս Սարգսյանը:- Համաշխարհային մակարդակի պոեզիա ունենք. Հրանտն իր խոսքով, գրվածքով աղացուցեց, որ նաեւ համաշխարհային մակարդակի արձակ ունենք: Ես բախտ եմ ունեցել նրա գրվածքների հիման վրա նկարահանված ֆիլմերում իմ մասնակցությունն ունենալ. առաջինը «Չեզոք գոտի» հանձարեղ քաղաքագրությունն է, որտեղ ես բախտ ունեցա մարմնավորել գլխավոր դերը եւ «Մենք ենք, մեր սարերը»: Եթե այսօր փոքր երեխաները մոտենում ու ինքնագիր են խնդրում, ես դա վերագրում եմ հենց «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմին: Այս ֆիլմը ժողովուրդն անգիր գիտի: Թող Հրանտի հիշատակը հավերժ մնա մեր սրտերում,- ասաց սիրված դերասանը:

ՀՀ վաստակավոր արտիստուհի **Գրետա Մեջլումյանը** մի հատված կատարեց «Աշնան արեւը» պատմվածքի հերոսուհու՝ Աղունի մենախոսությունից:

Հանդիսությանը ներկա էր նաեւ Հրանտ Մաթեւոսյանի կինը՝ **Վերժինե Մովսիսյանը**: Նա շնորհակալություն հայտնեց, որ ժողովուրդը, ինչպես միշտ, մեկ քայլ առաջ է անցել եւ գրողի արձանը տեղադրվել է «Հրանտի սիրելի բնաբխարհում»

Բանաստեղծ **Լիպարիտ Սարգսյանը**, որ Հրանտ Մաթեւոսյանի համակուրսեցին է եղել, նույնպես հուշեր պատմեց մեծանուն գրողի մասին, իսկ բանաստեղծ **Հրաչյա Սարուխանը** կարդաց իր բանաստեղծություններից մեկը, որը գրվել է Հրանտ Մաթեւոսյանի մահից հետո՝ նրա հիշատակին: Նա դրվատանքի խոսքեր ասաց նաեւ ուղղված քանդակագործ Սարգիս Ղարիբյանին (Սեւո), որ կերտել է մեծ գրողի հուշարձանը:

Շնորհավորանքի խոսք հղեց նաեւ մատուռի հիմնադիր եւ հովանավոր, արցախյան հերոսամարտի մասնակից **Սամվել Վանեսյանը**, ով մի շարք բարեգործական նախաձեռնությունների հեղինակ է ու պատրաստակամություն է հայտնել աջակցելու արձանի տեղադրման նախաձեռնությանը: Նա իր հերթին շնորհակալություն հայտնեց Մխիթար Մաթեւոսյանին, գնդապետ Համլետ Մաթեւոսյանին, բոլոր նրանց, ովքեր օգնել են արձանը տեղադրելուն եւ տոնակատարությունը կազմակերպելուն:

Հրանտ Մաթեւոսյանի արձանի բացման պատիվը տրվեց գրողի հարազատներին եւ Սոս Սարգսյանին: Ապա կատարվեց Խաղողօրհնեքի արարողությունը: Օրհնության կարգը կատարեց Գուգարաց թեմի առաջնորդը: Ներկաները ճաշակեցին օրհնված խաղողը:

Օրհնվեց եւ բաժանվեց նաեւ Սուրբ մատաղը, որը նվիրված էր զոհված ազատամարտիկների հիշատակին: Բնության գրկում բացվել էին նաեւ հյուրասիրության սեղաններ, որտեղ իրենց ուխտը կատարելուց հետո հյուրասիրվեցին, մատաղ համտեսեցին ներկաները:

Գեղարվեստական կատարումներ եւս ներկայացվեցին, հանդես եկան մարզի երգի, պարի համույթները:

ԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեի աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետեւյալ կրտսեր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. «Շենգավիթ» տարածային ստորաբաժանման անշարժ գույքի հաշվառման բաժնի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 41-4.2-23)
2. «Շենգավիթ» տարածային ստորաբաժանման անշարժ գույքի հաշվառման բաժնի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 41-4.2-24)
3. «Շենգավիթ» տարածային ստորաբաժանման անշարժ գույքի հաշվառման բաժնի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 41-4.2-28)
4. «Դավիթաշեն» տարածային ստորաբաժանման անշարժ գույքի հաշվառման բաժնի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 41-4.2-38)
5. «Աշտարակ» տարածային ստորաբաժանման 1-ին կարգի մասնագետ (հաշվառման եւ կադաստրային գնահատման գծով) (ծածկագիր՝ 41-4.2-217)

1-5 կետերում նշված մասնագետները մասնակցում են Ստորաբաժանման կողմից իրականացվող անշարժ գույքի հաշվառման /չափագրման/ աշխատանքներին, ինչպես նաեւ կադաստրային քարտեզագրման հանութագրման եւ հողաշինարարական աշխատանքների իրականացմանը:

6. «Մարտունի» տարածային ստորաբաժանման 1-ին կարգի մասնագետ (հաշվապահ) (ծածկագիր՝ 41-4.2-234)

Իրականացնում եւ ապահովում է Ստորաբաժանման հաշվապահական հաշվառման համապատասխան գրանցումների եւ դրանց ամփոփման, հաշվապահական հաշվառման վարման, հաշվապահական հաշվառման խնդիրների լուծման, հաշվապահական հաշվետվությունների, հաշվեկշիռների, նյութերի հաշվապահական մշակման եւ ամփոփ հաշվապահական հաշվետվությունների կազմման աշխատանքները:

7. «Վայք» տարածային ստորաբաժանման 1-ին կարգի մասնագետ (ընդհանուր բաժնի գծով) (ծածկագիր՝ 41-4.2-179)

Մուտքագրում է (այդ թվում համակարգիչ) Ստորաբաժանմանը հասցեագրված գրությունները, քաղաքացիների դիմումները, դիմում-բողոքները՝ ըստ տրման հերթականության, վարում է դիմումների հաշվառման մատյանները: Ապահովում է Ստորաբաժանման ղեկավարի կողմից մակագրված թղթակցության հանձնումը համապատասխան կատարողներին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
▼ առնվազն միջնակարգ կրթություն.

Դիմող ՀՀ քաղաքացիները կոմիտե պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝
▼ գրավոր դիմում (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
▼ կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,
▼ աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում)
▼ քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը,
▼ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը կամ համապատասխան տեղեկանք,
▼ մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափի,
▼ անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչեւ 12:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 30.08.2011 թ.:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ
(ք.Երեւան, Արշակունյաց 7, հեռ. 58-03-41)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ - ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-11/1

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 7 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի /այսուհետ՝ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ/ կարիքների համար հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կարիքների համար «Կենտրոն» սպասարկման գրասենյակի, «Արաբկիր» սպասարկման գրասենյակի և «Արագածոտն» ստորաբաժանման վարչական տարածքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2011թ. դեկտեմբերի 20-ն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դասական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Բաց ընթացակարգը փաստաթղթային տեսքով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված՝ 39-րդ օրը, ժամը 15:00-ին:

Բաց ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում թղթային ձևով անվճար հրավեր ստանալ:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 7, 314 սենյակ հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված 40-րդ օրվա ժամը 15.00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Բաց ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

Հայ մարզիկների առաջին ոսկե մեդալն ուսանողական խաղերում

Չինասանի Չենժեն քաղաքում մեկնարկել է համաշխարհային 26-րդ Ունիվերսիադան: Հայաստանի մարզիկների համար այն հոբելյանական՝ 10-րդն է: Ուսանողական խաղերի մեկնարկը մեր մարզիկների համար նշանավորվեց Ունիվերսիադաների պատմության մեջ առաջին ոսկե մեդալի նվաճմամբ: Մինչ այդ հայ մարզիկները նախորդ 9 խաղերում նվաճել էին 3 արծաթե եւ 11 բրոնզե մեդալ: Հայաստանին առաջին ոսկե մեդալը պարգեւեց մինչեւ 77 կգ քաշային ծանրորդ Աղասի Աղասյանը, որը երկամարտի 337 կգ (151+186) արդյունքով դարձավ հաղթող:



Ի դեպ, ծանրամարտն, ինչպես նաեւ շախմատն առաջին անգամ է ընդգրկվել ուսանողական խաղերի ծրագրում: Աղասի Աղասյանը վստահ ելույթ ունեցավ: Պոկում վարժությունում նա հաջորդաբար բարձրացրեց 146 եւ 151 կգ: 3-րդ մոտեցումը (153 կգ) թեեւ անհաջող էր, սակայն 151 կգ-ն էլ բավարար էր պոկում վարժության ոսկե մեդալին արժանանալու համար: Հրում վարժությունում էլ Աղասին առաջին երկու մոտեցումները հաջող կատարեց (182 եւ 186 կգ), իսկ ահա 190 կգանոց ծանրաձողը նրան չենթարկվեց: Այս վարժությունում Աղասին ավելի ծանր անձնական քաշի պատճառով ոսկե մեդալը զիջեց ռուսաստանցի Վիկտոր Խառչենկոյին, որը երկամարտի 331 կգ (145+186) արդյունքով երկամարտում դարձավ 3-րդ մրցանակակիր: Աղասյանը երկամարտի արդյունքով 5 կգ-ով գերազանցեց արծաթե մեդալակիր դարձած ռուսաստանցի մեկ այլ ծանրորդի՝ Վյաչեսլավ Լաստուխինին:

Ունիվերսիադայում մրցահարթակ դուրս կգան եւս չորս հայ ծանրորդներ՝ Արամ Անդրիկյանը (85 կգ), Նորայր Վարդանյանը (94 կգ), Վարդան Դավթյանը (94 կգ) եւ գերծանրքաշային Հայկ Հակոբյանը:

Ռոբերտ Հովհաննիսյանն աշխարհի փոխչեմպիոն

Հնդկաստանի Չենայ քաղաքում վերջնագիծը հասեց շախմատի մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը: Տղամարդկանց մրցաշարում հիանալի հանդես եկավ հանրապետության այս տարվա չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը, որը վերջերս Հայաստանի հավաքականի կազմում դարձել էր աշխարհի թիմային առաջնության հաղթող: Ռոբերտը շաս վստահ անցկացրեց ողջ մրցաշարը, մինչեւ ավարտական տուրը հավակնում էր աշխարհի չեմպիոնի տիտղոսին: Ավարտական՝ 13-րդ տուրից առաջ Ռոբերտը 10 միավորով միանձնյա գլխավորում էր աղյուսակը: 9,5 միավորով 2-րդ տեղում էր լեհ Դարիուշ Սվերչը, որին մեկ միավոր էր զիջում Սամվել Տեր-Սահակյանը:

Մեդալների բաշխումը կատարվեց ավարտական տուրում: Ռոբերտ Հովհաննիսյանը սեւերով ոչ-ոքի խաղաց ադրբեջանցի Վասիֆ Դուրարբեյլիի հետ ու վաստակեց 10,5 միավոր: Երկարատեւ պայքարից հետո 92-րդ քայլում Դարիուշ Սվերչին հաջողվեց հաղթել Վլադիսլավ Կովալյովին ու միավորներով հավասարվել Հովհաննիսյանին: Լրացուցիչ ցուցանիշները հաշվարկելիս պարգևվեց, որ աշխարհի չեմպիոնի տիտղոսին է արժանացել լեհ Դարիուշ Սվերչը, իսկ Ռոբերտ Հովհաննիսյանը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով:

Մրցանակային տեղի էր հավակնում նաեւ Հայաստանի 2-րդ պատվիրակը՝ Սամվել Տեր-Սահակյանը: Սակայն նա ավարտական տուրում սեւերով պարտվեց հնդիկ միջազգային վարպետ Շահայ Գրովերին ու զրկվեց մեդալից՝ 8,5 միավորով գրավելով 9-րդ տեղը: Իսկ ահա Գրովերն այդ հաղթանակի շնորհիվ 9,5 միավորով դարձավ բրոնզե մրցանակակիր:

Ռոբերտ Հովհաննիսյանը մրցաշարում մնաց անպարտելի: Նա 13 պարտիաներից 8-ում հաղթեց, 5-ն ավարտեց ոչ-ոքի: Ընդ որում 3-9-րդ տուրերում հայ շախմատիստն անընդմեջ հաղթանակներ տոնեց եւ միանձնյա գլխավորեց աղյուսակը: 9-րդ տուրից հետո 7,5 միավորով 2-րդ տեղում էր Սամվել Տեր-Սահակյանը: 10-րդ տուրում հայ շախմատիստները մրցեցին միմյանց հետ: Գրանցվեց ոչ-ոքի: Փաստորեն, հենց այդ կետ միավորն էլ Ռոբերտ Հովհաննիսյանի համար ճակատագրական եղավ: 11-րդ տուրում նա հաշտություն կնքեց նաեւ Դարիուշ Սվերչի հետ, իսկ հաջորդ տուրում հաղթեց Ռայ Ռոբսոնին:

Սամվել Տեր-Սահակյանը եւս վստահ էր խաղում մրցաշարում՝ գրնվելով առաջատարների խմբում: Նրա համար ճակատագրական եղան ավարտական 2 տուրերում Դարիուշ Սվերչից եւ Շահայ Գրովերից կրած պարտությունները, որոնք էլ զրկեցին հայ շախմատիստին մրցանակային տեղից:

Աղջիկների մրցաշարում Հայաստանը ներկայացնում էր մինչեւ 18 տարեկանների հանրապետության այս տարվա չեմպիոնուհի Մարիա Գեւորգյանը: Նա 13 հնարավորից վաստակած 6 միավորով գրավեց 43-րդ տեղը 69 մասնակիցների մեջ: Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց պերուացի Դեյսի Կորին, որը վաստակեց 11 միավոր: 2-րդ տեղը 10,5 միավորով գրավեց ռուսաստանցի Օլգա Գիրյան: Բրոնզե մեդալակիր դարձավ վրացի Նազի Պաիկիձեն՝ 9,5 միավոր:

Շախմատասերներին հիշեցնենք, որ մինչ օրս հայ շախմատիստներից երեքին՝ Վլադիմիր Հակոբյանին, Լեւոն Արոնյանին եւ Զավեն Անդրեասյանին է հաջողվել նվաճելու մինչեւ 20 տարեկանների շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսը, որին շաս մոտ էր նաեւ Ռոբերտ Հովհաննիսյանը:

«Բանանցը» ջախջախեց «Փյունիկին»

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 18-րդ տուրը նշանավորվեց երկրի չեմպիոն «Փյունիկի»՝ «Բանանցից» կրած խոշոր հաշվով պարտությամբ (0-3): «Փյունիկի» ղեկավարությունը շարունակում է իր փորձառու ֆուտբոլիստներին արտերկիր ուղարկելու քաղաքականությունը: «Բանանցի» հետ խաղում թիմի կազմում չէր էդգար Մանուչարյանը, որը վարձավճարով հանդես է գալու Ռուսաստանի առաջին խմբի Եկատերինբուրգի «Ուրալում»:

«Բանանց»-«Փյունիկ» հանդիպումից առաջ կայացավ մեծ ֆուտբոլիստ Արթուր Ոսկանյանի հրաժեշտ տալու արարողությունը: «Բանանցի» 35-ամյա ավագը մարզական աշխատանքի է անցնելու հարազատ ակումբի մարզադպրոցում: Նրա խաղընկերները լավ նվեր մատուցեցին՝ 3 անգամ գրավելով փյունիկցիների դարպասը: Աչքի ընկան Բրունո Կորեան, Վալտեր Պողոսյանն ու Արթուր Եդիգարյանը:

Նոր հաղթանակ տարավ «Գանձասարը»՝ «Հրազդանում» 1-0 հաշվով պարտության մատնելով «Արարատին»: Միակ գոլը 28-րդ րոպեին խփեց Անդրանիկ Սարգսյանը: «Ուլիսն» էլ Իջեւանում Արտակ Գրիգորյանի եւ Ալբերտ Թադեւոսյանի խփած գոլերի շնորհիվ հաղթեց «Շիրակին», որը 5-րդ անընդմեջ պարտությունը կրեց:

Բավական հետաքրքրական պայքարում անցավ «Միկա»-«Իմպուլս» հանդիպումը: Առաջին խաղակեսի ավարտին Զավեն Բաղդասյանը 11 մ հարվածով առաջ մղեց «Իմպուլսին»: Ընդմիջումից հետո «Միկան» ընդամենը 4 րոպեում վճռեց հանդիպման ելքը Ալեքսի եւ Նարեկ Բեգլարյանի խփած գոլերի շնորհիվ:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Գանձասար	18	10	6	2	24-8	36
2. Ուլիս	18	10	4	4	24-14	34
3. Փյունիկ	18	8	6	4	25-20	30
4. Միկա	18	7	5	6	22-17	26
5. Իմպուլս	18	7	4	7	23-22	25
6. Բանանց	18	5	7	6	25-22	22
7. Շիրակ	18	3	4	11	15-30	13
8. Արարատ	18	2	4	12	12-37	10

Ռմբարկուները

Բրունո Կորեա	«Բանանց»	8
Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	8
Մարկոս Պիզելի	«Փյունիկ»	6
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	6
Զավեն Բաղդասյան	«Իմպուլս»	6

«Էրեբունին» անհաջողության մատնվեց

Ֆուտզալի ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլում անհաջող է հանդես գալիս Հայաստանի չեմպիոն «Էրեբունին»: Կիպրոսում ընթացող G խմբի մրցաշարի 2 խաղերում էլ «Էրեբունին» պարտվել է: Առաջին խաղում հայ ֆուտզալիստները 1-5 հաշվով զիջել են Ալբանիայի «Ֆլյամուրտարիին»: Մեր թիմից միակ գոլը խփել է Արամ Քոսայանը: 2-րդ խաղում «Էրեբունին» 1-6 հաշվով պարտվել է Փարիզի «Սպորտինգին»: Այդ խաղում միակ գոլի հեղինակ է դարձել Հենրիկ Գրիգորյանը:

2 տուրից հետո մրցաշարի առաջատարը Կիպրոսի «Օմոնիան» է, որը հաղթել է «Սպորտինգին» (5-4) եւ «Ֆլյամուրտարիին» (6-0): Վերջին խաղում «Էրեբունին» մրցելու է «Օմոնիայի» հետ: Ինչպես հայտնի դարձավ երեկոյան, «Ֆլյամուրտարիի» կազմում ռակազրկված ֆուտբոլիստի հանդես գալու պատճառով «Էրեբունուն» տեխնիկական հաղթանակ է շնորհվել:

ՇԱԽՄԱՏ

Ավետիք Գրիգորյանն առաջատարներից մեկն է

Չինաստանում ընթացող Ունիվերսիադայի շախմատի մրցաշարում Հայաստանը ներկայացնում են գրոսմայստերներ Զավեն Անդրեասյանը (2616), Ավետիք Գրիգորյանը (2608), Հրանտ Մելֆումյանը (2600) եւ միջազգային վարպետ Աննա Հայրապետյանը (2177):

Տղամարդկանց մրցաշարում 3 տուրից հետո Ավետիք Գրիգորյանը նույնքան միավորով Վան Հաոյի, Ահմեդ Ադլիի եւ Վասիլի Պապինի հետ գլխավորում է աղյուսակը: Գրիգորյանը հաղթել է Սենակա Ռաջենդրային, Բայաբսայխան Գունդավային եւ Միխալ Օլշեւսկուն:

2,5 միավոր ունի Զավեն Անդրեասյանը, որը մրցաշարը սկսեց Պատրիկ Կավումայի նկատմամբ տոնած հաղթանակով: Հաջորդ երկու պարտիաներում Զավենը ոչ-ոքի խաղաց Լուկա Պայչաձեի հետ ու պարտության մատնեց Ռուբեն Պերեյրային: Հրանտ Մելֆումյանը 1,5 միավորով 40-րդ տեղում է:

Կանանց մրցաշարում Աննա Հայրապետյանը 3 հնարավորից վաստակել է 1,5 միավոր: Նա հաղթել է Կորատա Լեսոյին, հաշտություն է կնքել Կատերինա Դոլգուկովայի հետ ու պարտվել է Շեն Յանին: Առաջատարներն են Յոլանտա Զավադական, Իրինա Վասիլեւիչը եւ Տուվշինթուգս Բաթիիմեգը:

Р²Ъо²р²рафВЪафЬ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ

Աճուրդով վարձակալության տրամադրվող գույքերի ցանկ

հ/հ	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի մակերեսը	Գույքի օգտագործման նպատակը	Վարձակալության տրամադրման ժամկետը	Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար)
1	Բուզանդի փ. 1/3, ցոկոլային հարկ	136,3 քմ	հասարակական	25 տարի	68,150
2	Բուզանդի փ. 1/3, ցոկոլային հարկ	74,1 քմ	հասարակական	15 տարի	37,000
3	Բուզանդի փ. 1/3, 1հարկ	4,0 քմ (2քմ+2քմ)	հասարակական	10 տարի	12,000
4	Բուզանդի փ. 1/3, 1 հարկ	248,1 քմ	հասարակական	15 տարի	124,000
5	Բուզանդի փ. 1/3, 4 հարկ	71,9քմ	հասարակական	5 տարի	71,900

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձինք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն: Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մասնամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ սեպտեմբեր 1-ին ժամը 16:00 -ին , ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ սեպտեմբերի 1-ը , ժամը 14:00- ը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հրատարակված է բաց ընթացակարգի հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ - ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-11/2

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Արշակունյաց 7 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի /այսուհետ՝ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ/ կարիքների համար ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կարիքների համար «Շենգավիթ» սպասարկման գրասենյակի, «Սյունիք» տարածային ստորաբաժանման, «Արարատ» տարածային ստորաբաժանման եւ «Գեղարքունիք» տարածային ստորաբաժանման վարչական տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2011թ. դեկտեմբերի 20-ն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ հաղորդակցություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավճռությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Բաց ընթացակարգը փաստաթղթային տեսքով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված՝ 39-րդ օրը, ժամը 15:00-ին:

Բաց ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում թղթային ձեւով անվճար հրավեր ստանալ:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, ք. Երեւան, Արշակունյաց 7, 314 սենյակ հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված 40-րդ օրվա ժամը 15.00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Բաց ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

հ/հ	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի օգտագործման նպատակը	Հողամասի մակերեսը (քմ)	Շինության մակերեսը (քմ)	Մրցույթի պայմաններ		
					1	2	3
1	Աբովյան փողոց հ.48/13	Ստորգետնյա անցում	681,1	652,6	գույքի վաճառքի համար առաջարկվող նվազագույն գինը՝ 98 500 000 դրամ	մրցույթում հաղթողի միջոցների հաշվին օտարվող գույքի, ինչպես նաեւ ամբողջ ստորգետնյա անցումի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում (այդ թվում ընթացիկ) եւ պահպանում, օդափոխության կազմակերպում, աղբահանության եւ սանմաքրման աշխատանքների կազմակերպում, լուսավորության ապահովում, հասարակական զուգարանի կառուցում, կոյուղու եւ ջրագծերի անցկացում	ներդրումներ կատարել մեկ տարվա ընթացքում՝ առնվազն 255 500 000 դրամ

Երեւան, Աբովյան փողոց թիվ 48/13 հասցեում գտնվող գույքը ծանրաբեռնված է 3-րդ անձանց վարձակալության իրավունքներով, ինչպես նաեւ առկա են փասացի օգտագործողներ եւ մրցույթի հաղթողը կրում է դրա հետ կապված բոլոր ռիսկերը:

Մրցույթին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Մրցույթի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Մրցույթին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրեր:

Մրցույթը կայանալու է 2011թ սեպտեմբերի 2-ին ժ.16.00-ին , q. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ սեպտեմբերի 2-ը, ժամը 16.00-ը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

հ/հ	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի օգտագործման նպատակը	Հողամասի մակերեսը (քմ)	Շինության մակերեսը (քմ)	Մրցույթի պայմաններ		
					1	2	3
1	Մաշտոցի պողոտա թիվ 20/4	Ստորգետնյա անցում	2053,0	2053,0	գույքի վաճառքի համար առաջարկվող նվազագույն գինը՝ 349 000 000 դրամ, վճարումը 1 տարվա ընթացքում ըստ օրացուցային եռամսյակի համամասնորեն	մրցույթում հաղթողի միջոցների հաշվին օտարվող գույքի, ինչպես նաեւ ամբողջ ստորգետնյա անցումի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում (այդ թվում ընթացիկ) եւ պահպանում, օդափոխության կազմակերպում, աղբահանության եւ սանմաքրման աշխատանքների կազմակերպում, լուսավորության ապահովում, հասարակական զուգարանի կառուցում, կոյուղու եւ ջրագծերի անցկացում	ներդրումներ կատարել 2 տարվա ընթացքում՝ առնվազն 474 500 000 դրամ

Երեւան, Մաշտոցի պողոտա թիվ 20/4 հասցեում առկա են փասացի օգտագործողներ եւ մրցույթի հաղթողը կրում է դրա հետ կապված բոլոր ռիսկերը:

Մրցույթին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Մրցույթի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Մրցույթին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրեր:

Մրցույթը կայանալու է 2011թ սեպտեմբերի 2-ին ժ.16.00-ին , q. Երևան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2011թ սեպտեմբերի 2-ը, ժամը 16.00-ը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը տեղեկացնում է

ԿՈՐԵԼ Է

1. ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձորի բժշկական ամբուլատորիա ՊՁ-ի կլոր կնիքը: Համարել անվավեր:
2. ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձորի բժշկական ամբուլատորիա ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N79.140.00146) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
3. Կապանի քաղխորհրդի գործկոմի նավթամթերքների եւ քսայուղերի ստացման ու բաշխման ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N27.140.00198) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
4. Բարձրավանի գյուղխորհրդի «Մաճկալ» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N60.140.00095) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
5. Քարաշենի գյուղխորհրդի գործկոմի «Քարավան» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N60.140.00165) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
6. Հարժիսի գյուղխորհրդի «Նիվա» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N60.140.00205) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
7. Տաթեւի գյուղխորհրդի գործկոմի «Մշակող» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N60.140.00222) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
8. Ակների գյուղխորհրդի գործկոմի «Ակներ-2» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N60.140.00233) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
9. Աբովյանի թիվ 1 բնակարանային տնտեսություն ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N11.140.00967) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
10. Աբովյանի թիվ 2 բնակարանային տնտեսություն ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N11.140.00993) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
11. Աբովյանի Հ3 բնակարանային տնտեսություն ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N11.140.01019) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
12. Աբովյանի Հ4 բնակարանային տնտեսություն ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N11.140.01032) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
13. Աբովյանի Հ5 բնակարանային տնտեսություն ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N11.140.01033) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
14. Շինարարության կազմակերպում, հսկողություն եւ սպասարկում ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N11.140.00966) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
15. Հրազդանի շրջգործկոմի Աթարբեկյան թաղամասի գյուղատնտեսական ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N33.140.00766) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
16. Կոտայքի շրջանի «Առեւտրաարտադրական միավորում» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N42.140.00047) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
17. Բնակարանային կոմունալ սպասարկման Նոր-Գեղիի ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N80.140.00141) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
18. ՀՀ Նաիրիի շրջգործկոմի «Պատանի մարզիկ» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N80.140.00331) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
19. ՀՀ Նաիրիի շրջգործկոմի «Նաիրի» մսուր-մանկապարտեզ» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N80.140.00332) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
20. «Բջնի-5» տնտհաշվարկային ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N85.140.00990) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
21. Վ .Աղբյուրակ թաղամասի գյուղատնտեսական ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N33.140.00471) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
22. «Շինարար» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N37.140.00037) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
23. Հայգյուղկոնտրակտ ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N286.140.00478) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
24. «Գյուղատնտեսական մշակաբույսերի սորտափորձարկման հանձնաժողով» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N16.140.00508) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ԼՈՒԾԱՐԿՈՒՄ ԵՆ

«Քարակերտ» ՊՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Բաղրամյանի տարածքային բաժնում 31.03.1999թ., գրանցման համարը՝ 57.120.00198, վկայականի համարը՝ 02Ա044841:

«Կապանջրշին» ՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Կապանի տարածքային բաժնում 22.12.1995թ., գրանցման համարը՝ 27.120.00535, վկայականի համարը՝ 01Ա021769:

«Ագրոնավթաբազա» ՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Մալաթիա-Սեբաստիա տարածքային բաժնում 06.09.2000թ., գրանցման համարը՝ 290.120.02458, վկայականի համարը՝ 02Ա048571:

«Շենկառ» ՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Շենգավիթի տարածքային բաժնում 31.05.1995թ., գրանցման համարը՝ 269.140.00716, վկայականի համարը՝ 01Ա013153:

«Գեոկոմպլեքս» ՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնում 29.03.1995թ., գրանցման համարը՝ 264.140.00928, վկայականի համարը՝ 01Ա009613:

Պարտատերերը երկամսյա ժամկետում դիմեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ լուծարման հանձնաժողովներին:

Հասցե՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 4: Հեռախոս 52-65-57:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ACBA-CREDIT AGRICOLE BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Վայոց Ձոր» մասնաճյուղին պատկանող ՎԱԶ-21213 մակնիշի, 2000թ. արտադրության մեքենա: Ցանկացողները կարող են դիմել «Վայոց Ձոր» մասնաճյուղ՝ q. Եղեգնաձոր, Վ. Ձորավար փ. 37 կամ զանգահարել (0281) 2 41 77 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 2-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԳԴ-ԲԸԾՁԲ-4

Պատվիրատուն՝ **ՀՀ դատախազությունը**, որը գտնվում է ք. Երեւան, Վ.Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Բաց ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել **« ՀՀ գլխավոր դատախազությունում եւ նրա համակարգի ստորաբաժանումներում ներդրված էլեկտրոնային համակարգերի, ցանցի եւ համալրող միջոցների սպասարկման ծառայությունների ձեռքբերման»** գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ դատախազության կարիքների համար ***ՀՀ գլխավոր դատախազությունում եւ նրա համակարգի ստորաբաժանումներում ներդրված էլեկտրոնային համակարգերի, ցանցի եւ համալրող միջոցների սպասարկման ծառայությունների*** ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Բաց ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել **ՀՀ գլխավոր դատախազություն**՝ ք. Երեւան, **Վ.Սարգսյան 5, 21** սենյակ հասցեով, մինչեւ ս/թ սեպտեմբերի 13-ը ժամը **12:00-ը**, դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Բաց ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Բաց ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության դատախազություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցվաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ - ԱՇՁԲ - 22

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ՀՀ ք. Երեւան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում, որն անցկացվելու է մեկ փուլով:

Պարզեցված ընթացակարգով գնման հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու մաքսակետի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու մաքսակետի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի գործողությունները եւ որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գնումների աջակցման կենտրոն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ք. Երեւան, Մ.Խորենացու-7, 107 սենյակ հասցեով, մինչեւ 21.08.11թ ժամը՝ 15:00-ը, դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Հայտերը բացվում են հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներակայացրած մասնակցի հայտը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 16.8.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: